


18349

Unter - Kulturbrauchtum
Dhunay - fachmam

fahrs Veliye
fahruyt moubkr

Murphy 1913

891.99
S-37



891.542-1


ԱՏ-78

ԳՈՀԱՆԱՅ ՏԵՐ ԱԻՆՏԻՍԵԱՆ

(Մօրիկ-Պատրիկ)

ԽԵՆԹ ՄՇԵՑՈՒ

ԽԵԼԱՑԻ ԽՈՍՔԵՐ



Թ. Ա. Կ. Բ. Հ. Զ
1913

891.99

25-37

146

Լեհունդ ՔԱՀԱՆԱՅ ՏԵՐ
ՄԻ ԱԻԵՏԻՍԻՍԵԱՆ

34

(Մօրիկ կամ Պատրիկ)

288

Ի գոյզ առաջ ճեղաց թիւր
ճայրաց բառերու շշկանը
քեր ջայրացաւը .

— 2 5 10

ԽԵՆԹ ՄՇԵՑՈՒ

ԽԵԼԱՑԻ ԽՕՄՔԵՐԸ

ԽՈՎ



Հեղինակի պահանջմանք արտասպառ և
նոյնուրեամբ:

1913

Տպարան „ՓԱՐՈՍ“ Թաւրիկ

4191

2003

Այս օրուան օդն է ամպամած
Կարդա դու զայս ուղիղ գըուած
Թէկ փոքրիկ է այս յօդուած
Յառաջ կերթաս դու անկասկած:

Մի կայնիք ինձ դու դիմադարձ
Բան կուսանիս վկայ Աստուած,
Ցեղե սիրէ, Միլով վառուած
Միմիայն չըլլաս դուն աղգատեց:

ԱՍՏԼ ՀԱՐՈՒՍԻ

ՅԱԲԱՋԱԲԱՆ

Աւետում եմ ես քեզ միայն,
Կարդա գուռ սա յառաջաբան
Կայ մի ըստիպում զիտնականին,
Մութն է թողում զիմաստ բանին:
Տանուաէրի խիստ բանութիւն,
Հալածում է անէ ի տուն:

Դործ կմնայ լսելքի հանձար,
Քրչով կանեն մարդու մի ճար,
Դուն աշխատիր իմ գրուածներ,
Կամաց կարդա մաքումդ առ.
Այն ժամանակ յոյժ կուսանիս,
Դու իմ փոքրիկ նազելի գառ:

Տգեղ զըրչիս փոքրիկ է առա,
Ուշագրութեամբ մաքումդ առ,
Բնաւթեան դէմ կըդնէ միշտ
Հանձարեղ մարդ վէհ գաղափար,
Հաւատացիր զըրուած բանիս
Թէմ չըդնես աւետումիս,
Թառամած ես, շուտ կը ծաղկիս:

Գիշերուան ժամն էր երեքին
Աստղեր տեսայ ես երկնքին,
Մէկն ընկաւ էր հարուստին,
Փայլում էր նա իբրև անգին:
Միւսն ընկաւ էր աղքատին,
Խաւարած էր նորա չորս դին,
Տէր գժըաղդ էր անտէր, անկին,
Մթնաշաղ էր խիստ ահազին:
Էնթերցողներ բաղդատեցէք,
Ուշագրութեամբ զայս կարգացէք,
Մէկ միւսէն գուք գատեցէք,
Մահուան դագաղն աստ զիաեցէք:
Մի օր գնացի Բերայի թաղ,
Մեռել մը կար կոտրած զագաղ,
Մի տէրտէր կար սաքով էր կաղ.
Հոգոց կատէր մեռելաթաղ:
Կրկին զացի էլի նոյն թաղ,
Մեռել մը կար հարուստու չաղ (գէր)
Ծածք զագաղի արծաթապաղ,
Ուստի խնկոց բիւրեան էր տաղ:
Լաւ տեսարան Աստուածաթաղ,
Սրտաձմլիկ եալալի խաղ,
Մեծ բազմութիւն Պօլսեցիք սաղ,
Ուստի խնկոց բիւրեան էր տաղ:

Գնչուն անցաւ ծախում էր մաղ,
Մեծ երաժիշտ երգեց զիւր խաղ,
Էֆէստիներ բռնած դադաղ,
Յամը էր ընթացք ու խիստ յապաղ:

Կեղծ հոգեսր մը կար այստեղ,
Մատամբ սանտրեց զմօրուք զբեխ,
Փորն էր ուռած դէմքով տգեղ,
Քարոզ կտար ամենայն տեղ:

Դրուգ ասեց մեռելատեղ,
Հարուստ մեռել, նա էր անմեղ,
Միս խրվրճիք ուտողին տեղ,
Մեծ տեսարան դրամատեղ:

ի 26 Յունիս 1909

Կ. Պոլիս Գատի գիւղ գրեցի զայս

ՆԿԱՏՈՒՄՆ ՆՈՐ ՄԹԴԱՅԻ ԴԱՎՐԵԺ ՖԱՂԱԲԻ

Դավրէժ քաղաք կայ հայ երկթաղ,
Չունին օրէնք ազատ անկախ,
Մարմնով պարարտ հոգով վահատ,
Մէկ սօցեալիստ միւս դէմօկրատ:

Որչափ ասես խիստ մեծարան,
Ուսման տկար սորված մի բան,
Ոչ ջուր ունեն և ոչ էլ նան (հաց)
Փորը քաղցած կերածն էլ թան:

Սալ դարբնին կոտրած գնդան,
Մէկ միւսին ոչ են հաւան,
Կտուր են շինում առանց թաւան
Պարոն տոել կանուանեն խան:

Թաւրիզում կայ կետրոնական,
Մէկ տեղ կը սովորին տղջիկ տղան,
Պարահանդէս միշտ կխաղան,
Ցորենի տեղ որոմ կաղան:

Կետրոնական մեծ վարժարան,
Լեէուագէտ են յոյժ զանազան,
Օղէվաճառ ձուկն է մազան,
Գլխարկ կրեն խկ են զազան:

| 1 Նոյեմբերի 1910

Դաւրէժ բաղա

ԿԵՂՄ ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆ

Այժմեան մարդիկ են անապանձ,
Սուտ ու փուտից խկ են դարսած,
Մարդ են խաբում միշտ անկասկած,
Անհաւատ են և ան Աստուած:

Տիպար սնին ասխացու,
Հագուստ կրեն երովացու,
Բարե որ տաս քէֆ մի հարցու,
Դէմք որ տեսար երես դարձու:

Բթին զբած շուշայ ակնոց
Վզին կապած ճերմակ գոգնոց,

Կոիկն ունի ոսկի քորոց,
Ծուռ է գնում ուղիղ փողոց:

Երանի էր այն սրբոց դար,
Այժմեան մարդիկ գործում են չար,
Ինչ որ կշռեն պակաս է քար.
Ճիշտ բարւոք էր ոսկի էն դար:

Կեղծ ու պատիր մարդիկ քիչ կար,
Հարիւրից մին էր իսկ և չար,
Ոչ մէկ վիճակ չունէր խիստ դառն
Սուտ չեն ասել չնչին մի բառ:

ԱՆԱՐԳՈՒԱԾ ԱՂՔԱՏ

Հարուստ աղքատ միմեանց պատահեցան
Հարուստ էն առաջ աղքատին խնդաց,
Մեր աղքատ սկիզբ բարե էր տուած,
Տանջուած ու յօդնած արտէն էր եկած:

Քայլափոխում էր խիստ կամաց,
Հարուստին փոյթ չէր նորա քայլուածք
Փոխանակ դէմքին քամակ շուռ տուած
Պարկեշտ աղքատին վատէրանպատուած

Երկուսի դիմաց տէր հայրն էր եկած,
Աղքատին թողած հարուստին բարեած,
Փոխանակ դէմքին քամակ շուռ տուած,
Դուք ինչ էք ասում այդ բանի մասին
Խուռն բազմութիւն հարկաւ բանբասին:

Այս չէ բանբասանք այլ բաննէ ասանկ
Հարուստ հպարտ է, աղքատ անպարտ է,
Աղքատի գրութիւն միշտ իրեն բանտէ,
Հարուստ աղքատին կը դատապարտէ:

Անցաւ միտարի հարուստ անարգուած,
Ման էր գալի զլուկն էր կախած,
Հստակ կորուած ինք խելագարուած,
Բոքիկ էր ոտքեր աչք արտասուաթաց:

Տէրն հայեցաւ եր այն խեղճ աղքատին,
Շատ փող ունեցաւ կինը գառաւ տիկին.
Օգնում էր նա միշտ այննոր աղքատին,
Կրարձրանայ շուտ ընկած վերստին:

ի 2 Յուլիս 1909
կ. Պոլիս

ԵՐԳ ՍՈՒՍԿԻ

(Մայիս ամսու դու գեփիւսիկի եղանակով)

Առաւօտեան լուսաբացին,
Սոխակ նստել վարդի թփին,
Գեղգեղում էր զիւր մեղեղին,
Ժամանակ էր գալուստ վրկչին:

Մսուր նստաւ ինք առանձին,
Անուն նորա Աստուածածին,
Անմեղ ծնաւ զիւր միածին,
Նա սփոփիչ էր հիւանդ անձին:

Նա տէր կայնաւ փոքրիկ հօտին,
Պաշտելին էր ամեն մարդին
Պատառ տուաւ էն կախարդին,
Որ համբուրեց վարդապետին:

Ճանել տուաւ գատաւորին,
Խիստ տանջեցին անմեղ զառին
Զայն գամեցին խաչափայտին,
Խաւար տիրեց երկրագնդին:

Մարիամ չոքաւ առ ոռ խաչին,
Նա ողբում էր զիւր միածին,
Շատ էր ցաւում նորա անձին
Աղօթում էր միշտ առանձին:

Բաղուկ նորա տարածեցին,
Երկաթ գամով զայն գամեցին
Հանգոյն նմա աւազակին:
Իտես մարդկանց անցու դարձին:

Մի վստահիր մարդկանց անձին,
Զտէրն աշխարհին էլ խաչեցին,
Սուտ վկաներ էլ կանչեցին.
Առ նախանձու չար գործեցին:

Խիստ փոթորիկ սաստիկ էր հով,
Վէտ, վէտ ալիք փրփրած էր ծով,
Կեկավար իսկ չէր առահով,
Խաւաստիներ թափան ի ծով:

ի 4 Յուլիս 1909
Կ. Պոլս

ՏԱԼԻ ՔԵՇԻԾ

Խենթ ու խելառ մի Մշեցի
Խելքէն մտքէն բան է անցի,
Վար վարելէն էր ձանձրացի,
Մի օր և նա տէրտէր է դարձի:

Անուն նորա դալի քէշիշ
Քարող կուտար ինչպէս ասիս,
Կանչեցին զայն Սուրբ Կարապետ:
Քարող կուտար իբր վարպետ:

Պաշտօն առւին այդ քաջ անձին,
Նուիրակ էր վանքի գանձին,
Կարագ ու իւղ կըհաւաքէր,
Ուզածի պէս ինք կը չափէր:

Անցաւ ատեն քանի տարի,
Փոխեց պաշտօն եղաւ արի,
Կհաւաքէր ցորեն գարի,
Ոչխար ու զառ հաւ և մարի,

Մի օր նա ինք շատ մտածեց,
Խելքէն մտքէն քամին փչեց,
Ինք իր մտքից բան մը ասեց,
Իսկոյն և եթ զայն կատարեց:

Այս տարի ես, այսպէս կանեմ,
Գառն ու մաքին մեղ կտանեմ,
Դիւղացւոց հետ քէֆ մը կանեմ.
Վարդապետաց բաժին չտանեմ:

Երբ վարդապետք զայսըան տեսան,
Կատաղեցան իբրև անբան,
Վրէժ առնող նոքա դարձան,
Միջոց ճարին այնպէս արին:

Նա ժուռ կուգար վանքի գիւղեր,
Քարոզ կըտար ամեն տեղեր,
Հաւաքում էր կարագ իւղեր,
Պատահեցաւ մի նոր մեսել:

Գիւղի անուն կասուէր չացկերտ,
Տեղուն տէրտէր գնացել էր,
Ուշ Քիլիսէ կամ Ալաջակերտ,
Վանքի անուն Սուրբ Կարապետ:

Հրաւիրեցին խենթ տէրտէրին,
Մեռել թաղել անձրի օրին,
Հիւր էր դառել տանուտէրին,
Դոռում կոչում էր ամպերին:

Վարդապետներ առիթ բերին,
Խեղճ տէրտէրի փիլոն առին,
Վրէժ լուծին ոչխար գառին,
Խենթ փափազին ժամ չտարին:

Տէրտէր գնաց ի գերեզման,
Եհան զմեռել ինքն էր միշին,
Բերաւ ձգեց մեռելատան,
Ասաց նոցա դուք անպիտան:

Զեր մեռել ես ձեղի կը տամ,
Զեր զլուխն ուտի դուք վատարան,
Ինչ որ կանէք բոլորն էլ խամ,
Տուք զիմ փիլոն գնամ մեր տան:

Բացատրութեան բովանդակութիւն սա է:
Մի օր այդ մշեցի խենթ տէրտէր Մշոյ Սուրբ
Կարապետ վանք ուխտի կը գնայ, վարդապետ.
Ներ նրա ճարպիկութիւն տեսնելով վանքի նը-
վիրակ կըկարգին, դալու քէշիշ մօտաւրապէս
տասներկու տարի հաւատարմաքար կը ծառա-
յէ, իսկ վարդապետներ փոխանակ վարձատրե-
լու, տէրտէրին խենթ կանուանեն, վրան խըն-
դալով. հէնց այդ պատճառաւ էլ տէր-տէր
բարկանալով մի տարի էլ վանքի անունով նուի-
րական արդիւնքները (այսինքն գառ, ոչխար.
իւղ, պանիր, հաւ, չորթան) բոլորն էլ հաւաքելով
տանում է իրեն տուն: Երբ վարդապետներ
տէրտէրի իւրացումը կը լսեն հետամուտ կը
լինեն սր առիթով մը, տէլու քէշիշին պատժեն:
Ինչպէս է պատահում տէրտէր գնում է վան-
քի գիւղերից մէկում իր մնացեալ ապառիկ ե-
կամուտներ հաւաքելու, մինոյն գիւղում մի
մեռել կպատահի. տեղույն քահանան բացակայ
կըլինի, գիւղացիներ տէլու քէշիշին կըհրաւի-
րեն նոյն մեռել թաղելու: Խեղճ տէրտէրն
էլ գիւղացւոց կամքը կը կատարէ. այդ օր էլ
հակառակ սատանի սուրհանդակ երկու վարդա-
պետներ գիւղը կըգան երբ զալու քէշիշի մեռե
լի թաղումը կը լսեն իսկոյն տէրտէրին կը կան-
չեն. ինեղձի փիլոն վար կառնեն. խոչախ տէր-
տէր բարկանալով կերթա գերեզմանատուն, ան-

միջապէս գերեզմանը քանդելով մեռելն ուսի
վրայ կդնէ ուղղակի կըբերէ վարդապետների
առաջ կը ձգէ ըսելով նրանց, առէք զծեր մեռել,
ձեր զլուխն ուտէ, տուէք զիմ փիլոն։ Տօ գար-
շելի շան որդիներ մէկ մեռելի համար զիմ փի-
լոն վար կառնէք։ Ահա ձեր մեռելն ձեր զլու-
խն ուտի տուէք զիմ փիլոն գնամ մեր տուն։
Խսկոյն վարդապետներ խնդալով տալու քէշիշին
փիլոնն իրեն կյանձնեն։ Հստոյդ բացարու-
թիւն բանաստեղծութեան սա է որ կարդացիր։

ի 10 Դեկտեմբեր 1909
Թաւրէժ

ՀԵՐՈՍ ԶԵՅԹԱՌԻՆԻ

Նժոյգ ձին նստած դու հայր քաջ բարդէ
երբ զինուած է նա գէմքով զուարթ է,
Օսման զօրքերին բիւր-բիւր կջարդէ,
Թէև վարդապետ արի քաջ մարդ է։

Թաւրիշ թանկագին չհագաւ իւր հազին,
Վեհանձն էր ինք սիրոյ կաթողին,
Պաշարեց զօրքին քանդեց զհիմ բիւրդին,
Խաչ բոնած էր ինք հետ ձեռաց զէնքին։

Սուր ձեռին բոնած նժոյգ ձին նստած,
Զօրատան զիմաց ձիով էր կանգնած
Խնքն անվեհեր անձ, սուր էր կաւկառած,
Սպահ ու զօրքեր տակէն անցուցած։

Կեցցէ բաւերով, տիտղոս ստացած,
Քօնսուլների հետ դաշին էր կապած,
Բերդի զօրքեր էլ գերի էր առած։

Կիլիկեայի մէջ սարսափ տարածած,
Անուն նորա է Բարթուղիմէոս
Զէյթուն ծնած է գոնուզի հերոս,
Նժոյգ ձին նստած նա է միշտ գոռոզ։

ի 20 մայիս 1909 թիւ
Կ. Պօլիս

1880 թուին Զէյթունի պատերազմին ֆո-
նուզի վանահայր Սուրբ Աստուածածնայ վա-
նուց Բարթողիմէոս վարդապետ յաղթեց Օսման
զօրքերին ու մինչեւ անգամ զօրաց բերդն ա-
ռուտ ու դաշին կապեց Եւրոպական քօնսոլների
հետ։

Վիճաբանութիւն մարդուն եւ կնոջ թէ
սէրն ումից է

Ասենօք կար մի կին և մարդ,
Սէրտ կապրէին հանգոյն իրը վարդ,
Նախանձեցին զրացիք և արդ,
Մի օր նոքա ընկան թակարդ։

Երեկոյեան, օրին մէկին,
Նոքա նստան ճաշ ընթրքին,
Երկուս մէկէն վիճաբանին,
Մէկ միւսին հարուած կանին։

Պատճառ սա էր իսկ բայարձակ,
Սիրով էին մեշտ համարձակ,
Վէճի բռնուան մարի և որձակ,
Կին կը ճըսւար մագեր արձակ:

Կինն ասում էր սէրն ինձնից է,
Մարդն ասում էր չէ ինձնից է,
Նիւթ վէճին էլ այս բանից էր,
Խօսք հակառակ սէր կը քանդէր:

Մաքում դրաւ տիկին թագուն,
Փորձով ցոյց տայ ինք իր Մարտուն,
Խաբելու մէջ կին է զարթուն.
Մարդն անմիտ է թմրած ի քուն:
Տիկին կոչեց ձկան որսորդ,
Մի տաս կոպէկ գձեց կոկորդ,
Չուկը առաւ իսկ և օղորդ,
Տարաւ հորեց արտում ի կորդ:

Մարդու անուն թմրած մարդիկ,
Լծեց իր վար գնաց արտիկ,
Շապիկ քղանցք լցաւ հատիկ,
Յանում էր նա միշտ խորոտիկ:
Սովորութիւն հայաստանի,
Ճաշի ատէն կին նաց տանի,
Իլիկ ձեռին բուրդ կմանի,
Տիկին Անգին ճաշ կտանի:

Մարտիկն արտում ցորեն ցանի,
Անգին հասաւ այս ժամանակ,
Մարդ ձուկն ճարեց իսկ անքանակ.
Յանձնեց կնոջ միանակ:

Մարդը կասէ, փառք Աստուծոյ,
Մեր տուն ունինք հաւկիթ ու ձու,
Այս ձկները տար դու մեր տուն,
Իրկուն կեփես ձըւածեղ և ձու:
Մեկտեղ կուտենք, կըլլանք ի քուն,
Շէն թող մնայ Աստուծոյ տուն,
Հրաշք եղաւ այսօր բիթուն,
Զկներ կուտենք, ես, դու, խաթուն:
Իրկուն եղաւ մարդ տուն գառաւ,
Զկներ եփող ինչեր չարաւ,
Եփեց, թափեց, ինք միայն լափեց,
Բնաւ մարդուն մաս չպահեց:

1001
Գ 0924

Մարդ և կնիկ նոյն սեղանին,
Վէճ սկսեց անցեալ բանին,
Մարդն ասաց, այ կնիկ դու,
Ուր է եփածդ էն ձուկն ու ձու:

Խոժոռ նայեց կնիկ մարդին,
Խսկոյն և եթ միմեանց ջարդին,
Իրաւունք է միշտ կախարդին,
Վայ է եկել անմեղ մարդին:

Մարդն էր խփում, կնոջ քացին,
Տիկին կանչեց մօտ դրացին,
Մէկ միւսին յանցանք բացին,
Խիստ զարմանք էր կնոջ լացին:

Դրացիք ասան մարդուն կնոջ,
Սէր կար ձեր մէջ միշտ և խոյնջ,
Չպէտքէ է մարդ ծեծէ կնոջ,
Սոււտ ես ասում որ ունի պոչ:



Մարտիկն ասաց ախ եղբայր գու,
Արտումս գտայ շատ ձուկն ու ձու,
Տուի կնոջս բերաւ իտուն,
Ինձ խարում է միշտ և անհուն:

Պարան բերաւ Անդին տիկին,

Սան կապեցին խեղճ Մարտիկին,

Զափազանց էլ մարդին թակին,

Գիշեր մնաց իմէջ բակին:

Իսկոյն և եթ մարդիկ գնացին,

Կին և էրիկ մենակ մնացին,

Էլ խօսք չկար մարդու լացին,

Շատ էր ծեծել մօտ դրացին:

Մարտիկն ասաց անգութ Անդին,

Ինձ կապեցին մարդիկ թակին,

Անզատուիր զիս ի մէջ բակին,

Բաց զիմ պարան, մեղայ տիկին:

Կին արձակեց ինք իւր մարդուն,

Խըատեց զայն մի օր բիթուն,

Ծեծել տուաւ իրեւ դըդում,

Մի վատահիր եւա որդուն:

ի 13 Դեկտեմբեր 1909
Դավթէծ

Բացատրութիւն բանաստեղծութեան: Մէկ
կին և իւր մարդ իրարու հետ շատ սիրով կապ-
րէին, այնպէս որ դրացիները մարդուն ու իր
կնոջ վրայ կը նախանձէին, մէկ օր էլ սատա-
նայի սուրհանդակը մըտաւ կնոջ և մարդուն
մէջ, երկպառակութեան մեծ-մեծ սերմեր ցա-

նեց որով կնիկ, գործնականապէս ցոյց տուաւ
իր մարդուն: Կանչեց ձկնորսին մի քանի փող
տուաւ նրան բաւական թուով ձկներ առաւ ու
տարաւ իր մարդուց ծածով թաղեց արտի
կորդ տեղեր առաւօտեան նախաճաշիկ տարաւ
մարդուն այն ատեն Անդին հասաւ արտը, ար-
դէն միկնոյն ժամանակ մէկ, մէկ, ձկները արօ-
րի բերան գուրս էին գալիս հերկի միջից: Մար-
տիկ ուշադրութեամբ հաւաքեց ձկները տուաւ
իր Անդին կնոջ ու ասելով. թէ այս ձկները
տանես տունը և էս իրիկուն մի լաւ ձուա-
ծեղ կը պատրաստես, ընթրիքի ատեն միասին
կուտենք: Իսկ տիկին իբրև հաւատարիմ ընկեր
իր մարդուն ճշմարիտ խօսք տուաւ, բայց հա-
կառակն ըրաւ, ձկները եփեց իր սիրականի
հետ կերաւ, միմիայն մի լոկ թան ապուր դը-
րաւ սեղանի վերայ, իր մարդի առաջ: Խեղճ
ու կրակ կարծում էր թէ՝ ապուրն ուտելէն յե-
տոյ, կընիկ իրեն համար ձուածեղն անպատ-
ճառ բերելու է, բայց երբ Մարտիկ տեսաւ ար-
դէն Անդին սկսաւ հասաքել սե-
ղանը, մարդն ասաց, այ կնիկ ուր է մեր արտի
միջի գտած ձկները, չէ ո՞ր դու, ինքոր խօսք
տուիր որ հիմա ձուածեղ պիտի եփէիր, որ մի-
ասին ուտէինք, ինչ եղաւ: Ահա կնոջ պատաս-
խանը, այ մարդ իւնթ ես, իսկի չոր արտի մէջ
ձուկն կը լինի, կերեկի գժուեր ես, և մի քանի
անգամ կը կնելով Անդին իր ասածները այնպէսոր

խեղճ մարդ կատարեալ բարկացաւ ու ըսկսաւ իր կնոջը երկու ապտակ իջեցնել, իսկ տիկինը հերարձակ ճշալով վազեց ճրագվառոցին դրբացիներին հաւաքեց իր տունը, ու խեղճ մարդու խենթութիւնը հաստատեց, միամիտ դրացիք հարցրին այ մարդ դուք շատ սիրով էիք, այս ինչ բան է, որ տեսնում ենք ձեր մէջ, Մարտիկն պատմեց մի ըստ միոջէ ձկների վերաբերմամբ և իր կնոջ հակառակ վարմունք և միամիտ դրացիները իրարուերես նայեցին ու ասացին միմիանց, իսկապէս այս մարդը խենթացեր է, իսկի չոր հողի մեջ ձուկն կլինի, և այդ խօսքի վրայ, աւելի պարոն Մարտիկն բարկացաւ, մի հարուած ևս կնոջն իջեցուց ամենահամեստ խոչախ տիկին, իր մազերը փետտելով ու շորերը պատառոտելով սարսափելի ճիշ արձակեց արտասուաթոր խնդրեց դըրացիներին, որ իր խենթ մարդուն կապեն բակի սան վրայ և այնպէս էլ բարի դրացիները Անգին տիկնոջ հրամանները կատարեցին. ըստ արժանոյն: Բաւական ժամանակ նստելով սկսան ցաւակցաբար խօսել միմեանց հետ, թէ՝ ինչ դժբախտութիւն էր պատահեց այդ խեղճ մարդուն: Յետոյ իւրաքանչիւրը ձգելով մարդուն ու կնոջը գնացին իրենց տներ: Վերջապէս խեղճ մարդը, իր կնոջ երեսին նայելով խորունկ հառաջանք մը քաշեց ու ասեց, անգութ կին, այս ինչ փորձանք էր, որ իմ գլխիս բերիր: Համար-

ձակաբար կնիկը պատասխանեց, ես քեզ չասի որ սէրն ինձանից է, իսկ դու՝ կըպնդէիր թէ՝ ինձինց է, տեսամբ ինչպէս խենթացնելով կապել տուի քեզի:

Ահա այսպէս կընէ կինը մարդուն, երբ նա քունն է, որ բնութեամբ չէ զարթուն:

ԺԱՄԱՆԱԿ է ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Քաջ պատանիք դուք հայկագեանց,
Հասեալ է ժամ պատութեանց,
Բաւ է կրեմք սուր և արկածք,
Անխիղճ, անգութ օտարագանց:

Տարօնացի եմ ես, Վարդան,
Թշուառութիւն հայուն կարդամ,
Ընկեր չունիմ ուզմի երթամ,
Շամփրեմ զոսոխն յուսկ յետ դառնամ:
Ով տէր Յիսուս, դուն ես միայն,
Տուր միութիւն ազգանազեան
Թող չերկնչի հայն այնքան,
Ժամանակ է ազատութեան:

ի 5 Յուլիսի 1889
ի Քղի գաւառ
Մայիս ամսու դու զեփիւոփիկի եղանակն ունի

ՈՎ ՇԱՏ ԳՈՅ Ե ԻՒՐ ԿՆՈՁԵՆ

Ճարիր դու ինձ, այնպէս մի մարդ:
 Որ կնոջմէ գոհ լինի արդ,
 Ժանդ կնոջ ձեռք կորած է մարդ,
 Հու ախկին գլխու է զարդ:
 Մի գիւղ տեսայ անուն Մուտուռ,
 Շատ մը մարդիկ նստած կտուր,
 Մելիքն եկաւ բարե ետուր,
 Խօսում էին բոլորն էլ՝ դուր:
 Մելիքն. Կատակ ըրաւ, դրամ կար բուռ,
 Ժողովք մարդկանց բազում էր՝խուռ
 Մի կին անցաւ գլուխն էր կուռ,
 Տուն գեղեցիկ, կոտրած էր գուռ:
 Հարց բացուեցաւ կանանց մասին,
 Մելիք պատմեց մարդկանց դասին,
 Ամեն մի մարդ մի բան ասին
 Շատ գովեցին մելիքի հարսին:
 Մելիքն ասաց աղբէր մարդիկ,
 Մի բան ասեմ միմեանց ջարդիկ,
 Մի կին ունեմ անուն Վարդիկ,
 Ով կա մեր մէջ չունի դարդիկ:
 Ո՞վ դժգոհ է, իւր կնոջէն,
 Ոտքի կայնէն բոլոր մէկէն,
 Իսկոյն կայնան բոլոր մէկէն.
 Նստած մնաց պարոն Տօտէն:
 Ասին նրան. Տօտէ դու ջան,

Տիկնոջէդ գոհ ես դու այդքան,
 Ոտքս կոտրեց կնիկս Մարջան,
 Ցետ մնացի ես անագան:
 Երեսում էր այս մէկ բանէն,
 Ոչ մին գոհ էր իւր կնոջէն,
 Բոլոր կայնան բացի Տօտէն,
 Նա էլ կաղ էր իւր մէկ ոտէն:

ի 28 Դեկտեմբերի 1909
 Դաւթէծ

ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴ

Ահա, տես, տես, խորշ-խորշ ձորեր,
 Զուտ վճիտ են նոցա ջրեր,
 Գեղեցիկ են կարմիր վարդեր,
 Սոխակ կերգէ անուշ երգեր:
 Խիստ կանաչ են տեղոյն թփեր,
 Մարմանդ հովեր հայոց լեռներ,
 Դեռափթիթ ծաղկունք, վարդեր,
 Մատամբ քաղեն օրիորդներ:

Ախ ուր մնացիք մեր տղաքներ,
 Կանայք, մանկունք հայոց քաջեր,
 Ուխտի դնան մեր սուրբ վանքեր,
 Խիստ քնքուշ են մանկամարդեր:
 Պիտ մենք տեսնենք այդ լու վանքեր,
 Արդ տիրում են գաղան թուրքեր
 Ո՛հ մեռած են հայոց քաջեր,
 Ո՞ւր մնացին նոցա լաճեր.

Դաւթէծ. ի 29 Դեկտեմբեր 1909

ՀԱՐՍ ԵՒ ՍԿԵՍՈՒՄ

Առենօք կար մի պառաւ կին,
Հարս մը ունէր անուն Անգին,
Շատ ունէին գառն ու մաքին,
Խոս էր տալիս մէջ իւր բակին:

Մեռաւ նորա աշխատաւոր,
Տղա, աղջիկ այր մուրուքաւոր,
Եղբայր, մայրիկ քոյր և քաւոր,
Լալիս էր նա ամեն աւուր:

Երկար տեսեց նորա սուզը,
Սպառեցաւ մալ և մուլքը,
Աչք կուրացաւ երկու զոյզը,
Հարսից կրում էր միշտ թուքը:

Խիստ ձմեռ էր օր ամպ ու բուք,
Հաց չունէին որ ուտէր մուկ,
Հիւանդ պառկած էր աչքագուրկ,
Սիրտն ուզում էր խորուած ու ձուկ,

Հարս զիզում էր աչք և ունքը,
Սիրում էր նա պատանիք զոյզը,
Դարեայ ունէր սամուր և քուրքը,
Առտու իրկուն կայնած էր զուրքը:

Պառաւ տատը ուզեց խորուած,
Մի գորտ եփեց գարշելի քած.
Տուաւ կեսրոջ անգութ անխած,
Զար հարսունք կան համատարած:
Մեռաւ կեսուր այն խեղճ տատին,

Զայն թաղեցին ի տակ պատին,
Անգին կարգեց իւր տղա մարտին,
Մի հարս բերաւ յաջորդ վատին:

Ատեն եկաւ նա ծերացաւ,
Պառաւ տատի, տեղն ինքն անցաւ,
Պարկեշտ հարսին կեսուր դարձաւ,
Խիստ ծերացաւ աչքէ կուրցաւ:

Հանգոյն նման իր սկեսուրին,
Ուզեց խորուած օր կէսօրին,
Հարսի անուն էր Իսկուհի,
Լաւ էր վարվում հետ կիսուրի:

Խորուած եփեց նոյն և կէտին,
Կուզէր տալ նա Անգին տատին,
Եփած միս էր ոչ թէ գորտին,
Արդար է Տէր դատ ահազին:

• Որչափ եփեց Իսկուհին միս,
Գորտ էր դառնում նոյն իսկ ժամին,
Դէն էր գծում գորտ դարձած միս,
Թոյլ չէր տալիս զինք մեղանչելիս:

Կիսուր զգաց եղելութիւն,
Պատմեց հարսին դարձած բիթուն,
Բեր տուր ինձի, գորտ դարձած միս,
Խիստ բարի ես սիրուն որդիս:

Զայս ասելով առաւ կերաւ,
Աստուած իրեն պատիժ տուաւ,
Տուած չափով զայն յետ առաւ,
Անգին տիկնոջ այսպէս դառաւ:

Թաւրիկ ի 20 'Իեկանեմբերի 1909

ՎԱՐԵԱԼ ՈԳԻ

Վարդան, Վահան Մամիկոնեան,
Վառեալ ոգւով նոյնիսկ ես կեամ,
Գուցէ սերունդ նոցունց լինիմ,
Ողի սատնիչ երբէք չունիմ։
Թշնամիք մեր զինունք վանեմ,
Նախնեաց վրէժ պէտք է հանեմ,
Որոմի տեղ ցորեն ցանեմ,
Վատ խուժանի հոգին հանեմ,
Քաջ հայկազանց ես մի սան եմ։

ի 5 Սեպտեմբերի 1888

ի Թղի գաւառում գրեցի
վարժապետ Ժամանակիս
Վարդան Տէր Աւետիսեան
Տարօնացի Այժմ ծուռ Մշեցի
Ղեռնդ քահանայ տէր Աւետիսեան։

ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Քուրտ ու Զերքեղ Օսման զօրքեր,
Քանդեցէն մեր նախնեաց վանքեր,
Հայաստանի վերքն ու ցաւեր,
Դուք դիտեցէք եղբայր հայեր։
Ի՞նչ ահոելի ձեր դիտած վայրեր,
Միշտ ոռոգել են հայ սուրբ արիւններ,
Իսկ հայ դիակներ կերել են գայլեր,
Պատճառ են դառել կատաղած քուրտեր։
Նոցա սուխներ, երկաթ ժանկոտներ,
Ծակծկոտեր են մեր մարց յարգանաներ,

Հարազատ տղան իւր միտք պիտ պահէ
Անմոռանալի վերքերն ու ցաւեր։

Նոքա գողացան մեր գանձն ու փարէն,
Սպանեցին գհարք մեր անգթօրէն,
Մեր հարսն ու աղջիկ գերի կը վարեն,
Անամօթարար կերգեն կը պարեն։

Գազանից գազան ամենից վար են
Ուզում են հայոց ճրագշուտ մարեն,
Զեղուծ զրպարտութեամբ մեզ կչարչարէն,
Տաք երկաթով մեզ կը խարեն։

ի 27 Սայիս 1909

Կ. Պօլիս

ՍԱՀԱՐՆՈՂ ՀՐԵՇՏԱԿ

Մարդ) Հրեշտակ—հրեշտակ, ուաւանում ես,
Նուրբ օղի մէջ միշտ անդատար,
Մէկ մը երկիր, մէկ մը երկինք,
Երիւն կը վոթես կամ թէ քրտինք։

Մարդ) Մենք ամեն մէկ կցանկանանք,
Քեզի նման շուտով դառնանք,
Ո՞հ մեր աշխարհ խիստ վատացաւ,
Մաքուր օրեր շուտով անցաւ։

Հրեշտակ) Ես լուր ունիմ երկնաւորէն,
Պիտ ձեզ պատժէ երկարօրէն,
Գործում էք դուք վատ կուրօրէն,
Քայլայեցիք տիրոջ օրէն։ (օրէնք)

Հրեշտակ) Իմ տէր զրկեց իւր միածին,
Դուք վատ ասիք նորա անձին,

Չապաշխարիք նորա դարձին,
Որ տէր դառնաք անդին գանձին:
 Մարդ) Մենք տկար եմք մարմին ունինք,
Ազատ կեանք երբէք չունինք,
Մէկն աղա միւսն գատի (գատաւոր)
Շարունակ մեզ միշտ կդատի:
 Հրեսակ) Աստուած ինքը միշտ մարդասէր,
Դուք նորա հօտ, ինքն է ձեր տէր,
Գիտէ նա իսկ ձեր դառն ցաւեր,
Մի օր կանէ ձեզ մեծ հրաւէր:
 Մարդ) Մեզի ջարդեց Համիդ սուլթան,
Ոչ հաց մնաց ոչ էլ չորթան,
Այժմ չզիտենք որտեղ երթանք,
Արգելեց մեզ էլ չկարգանք:
 Հրեսակ) Կարդա դու միշտ սուրբ պատմութիւն
Զգոյշ կացիր եղիք արթուն,
Վրէժինդիր է տէր միշտ զարթուն,
Մի օր կպատժէ Զերքեզ Քրդուն:
 ի 21 Մայիսի 1909
Կ. Պոլսի Փատի Գիտ
Ոլբալի խնդիր Նորին Վեհափառութեան
Առ Խրիմեան Հայրիկ
Տարօնացի Տէր Աւետիսեան Աւոնի բահանային:
 Աստուած իմ Աստուած ընդէր թողիր զիս
Պանդուխտ երկրումը վշտեր կայրին զիս,
Վշտերս թագուն, ցաւերս անհուն,
Լալիս եմ ես, գիշերն ի բուն:

Երբեմ վարդան արդ, տէր Աւոնի,
Երբ կոչում էք գուք զիս ձեր մօտ,
Աջդ համբոյրեմ, բուրում է հոտ,
Ես էլ մարդ եմ, ոչ տունկ ոչ խոտ:
 Արդարութեամբ տես, իմ այս իրք (գատը,
Ընդունիր գու զիս քո սուրբ գիրկ,
Կը վօթեմ զլսիդ զիմ բոլոր կիրք, (բարկութիւն)
Բարի է մահ քան թէ կեղծ գիրք:
 Երբ դիմեցի վեհ Հայրիկին,
Ընդունուեցայ ըստ իւր կարգին,
Դիւանատան ինձ յոյժ յարգին,
Իսկոյն և եթ գործերս կարգին:

ի 5 Մայիսի 1904

ի Ա. Էջմիածին

ՄՕՐՆ ՈՒՐԱՅՑՈՂ ՈՐԴԻՆ

Մայր) Ախ իմ գաւակ դուն քաջարի,
Ինձ կորեկ տուր կամ թէ գարի,
Մեռնում եմ ես, ծուխդ մարի,
Կաթ եմ տուել լեր գու բարի:
 Որդին) Դու չես ինձի բնաւ իմ մայր,
Կորի գնայ ընկիր ձոր սար,
Շուտով մեռիր վրադ էլ քար,
Գլսիդ կը տամ մի հաւի թաւ:
 Մայր) Ապերախտ, ո՞հ անիմիզ որդի,
Սպանում ես զիս նման քրգի,
Հաց տուր ուտեմ վատահոգի,

Նման ես դու անգութ թուրքի:
 Որդին) Որդիդ չեմ ես բնաւ քեզի,
 Վնաս տուիր միշտ դու մեզի,
 Չեմ ընդունիլ քեզ ինձ ազի (մայր),
 Դատարան կայ արդար խազի (դատաւոր)
 Հեղինակ) Շուտով գնաց մայր դատարան,
 Բողոք տուաւ այն մեծ սարան,
 Կանչին գորդին խսկոյն տարան,
 Արդար վճիռ հարկին արան:
 Հեղինակ) Դատաւորն էր իսկ և արդար,
 Վճիռ տուաւ խիստ անաչառ,
 Քննեց շուտով նա առ մի առ,
 Տղան նայեց մօր վատ ու սառ:
 Դատաւոր) Այսպէս ասաց իսկ դատաւոր,
 Մայրդ պահեց քեզի իւր փոր,
 Ինն ամիս էր պայման ու օր,
 Երեք տարի գրկում խեղճ մօր:
 Հեղինակ) Դատաւորն էր մտքով արթուն,
 Կշիռք բերաւ իր կեցած տուն
 Արդար էր նա խիստ բանիքուն,
 Վճիռ տուաւ նոյն և խսկոյն:
 Քաշած կշիռք էր հաւասար,
 Որչափ տղան էնքան էլ քար,
 Ծակել տուաւ նոյնիսկ քարին:
 Օղակն անցուց հաստ շղթային:
 Հեղինակ) Վզէն կապեց չար տղային,
 Պիտի պատժէր երեք տարին,

Ինն ամիս ինն էլ օրին,
 Սրդար էր դատ իսկ և ամեն,
 Հեղինակ) Բայց երբ տղան տեսաւ զայն բան,
 Իսկոյն զգաց միահաւան,
 Մեղայ գոչեց նոյն և հետան,
 Մօրն ընդունեց էլի տղան:
 Դավրէծ ի 25 Գեկտեմբերի 1909
 ՀԱՅ ԻՇԽԱՆ

Հայ իշխան ես սիրուն պատրիկ,
 Վրան գործիր գնւ իմ գառնիկ,
 Խիստ արեից դուք տաք չառնիք:
 Մեր թշնամուց վրէժ առնիք:
 Զեղ զինարան ցրոնք մառնիկ,
 Քաջ պատանիք գնդին խառնիք,
 Արի կացէք գերի առնիք,
 Զար մատնութիւն յանձն չառնիք
 Դէպ հայրենիք միթէ սառնիք,
 Դէմ թշնամեաց զինուք առնիք,
 Զինուրաց մէջ վատեր չխառնիք:
 Յերկնաւորէն շնորք կառնիք:
 Դուն Պատրիկն ես կամ թէ Մօրիկ,
 Կեղծիք չունիս բնաւ չարիք,
 Պատուած վրաններ շուտով կարիք,
 Վատ թշնամեաց ճրագ մարիք:
 Կ. Պօլիս ի 28 Մայիս 1909

ԱՊՐԵԼԻ ԲՈՂՈՔ ԲԱԴԳԻՑ

Ով դու անգութ անխիղճ բաղդիկ,
Է՞ր չես թողուր գնամ հայրենիք,
Չունիմ հայրիկ իսկ ոչ մայրիկ,
Բաւ է կրեմ դառն վշտիկ:

Վշտերս թագուն, ցաւերս անհուն,
Չունիմ ոչ տեղ և ոչ ալ տուն,
Կուլամ կողբամ գիշերն ի բուն,
Հիւանդ եմ ոհ, չունիմ ես քուն:

Քունս փախչած զլուխս դիժած,
Հառաչում եմ դէմ քս դիւրած,
Հառաչում եմ դէմ քո տիւրած,
Հոգեառս կայնած դիմացս,
Կամի զատել զհոգիս իբաց:

ի 25 Ապրիլ 1909

Կուսանուալիս
Գատի գիւղ

Նոր տարուայ առքիւ, Վիրաւոր հայրենակը

Շատ վատ օր է այս նոր տարիս,
Հալածվում եմ մինչ ցայս վայրիս,
Մի խնդալ դու հայ բառբառիս,
Դեղ ցանիր ոհ իմ նոր վէրքիս:

Ո՞հ Աստուած իմ, մի թողուր զիս
Խղճայ թշուառ անբախտ ազգիս,
Ա՛խքաշելով քաղուի հոգիս,
Տէր դու գթայ իմ հայ ազգիս:

Անբաղդ էի մօր յարգանդիս,
Աւաղ ծնեալ նոյն սև օրիս,
Մի լուր տարէք իմ տղայիս,
Որ գայ, շուտով դէպի առ իս:

Այժմեան տեղս Կոստան Պօլիս,
Սէր հայրենեաց կ'այրէ զհոգիս,
Մի անարգիր որդի դուն զիս,
Բայ և տանիս ծնեալ վայրիս:

Օնեալ տեղս Զըիկ Մուշ է,
Իւր հողն ու ջուր շատ անուշ է,
Մարգ և օդը վէրք կ'բուժէ,
Երկիր Մշոյ խուժագուժ է:

Զըիկ, Մշոյ սիրուն դաշտ է,
Ժողովուրդ իւր բարեպաշտ է,
Թուրքերի հետ միշտ անհաշտ է,
Իւր հիւրերին սիրով կպաշտէ:

Անբաղդ եմ ես Տարօնացի,
Ազգիս համար շատ ցաւ զգացի,
Ծունկի գալով միշտ ես լացի,
Իմ աշացս տէր մեղքացիր:

Ազգանունս տէր Աւետիս,

Տէր դուն գլխա վասն հայ ազգիս,
Ոչ կայ արատ ի մէջ վարքիս,
Խղճա թշւառ անբաղդ հիգիս:
2) Զրիկ գիւղ հեղինակիս ծննդավայրն է
Մուշ քաղաքին կպատկանի:

ի 25 Յունիս 1909 թիւ Կ. Պօլիս

ԵՐԳԻ ՏԽՈՒՐ ՄՈԽԱԿԻ

Առաւոտեան արշալոյսին,
Պատմեմ քեզի սորա մասին,
Ցողաշաղ էր մարդագետին,
Սոխակ նստել վարդի թփին:

Երգում էր նա զիւր մեղեղին,
Մութ էր պատած հայ աշխարհին
Կոտորած կար հայոց ազգին,
Զոհեր կոտար չար Համիդին:

Կորուստ հայոց էր ահագին,
Մարք լալիս ին խիստ դառնագին,
Արիւնաներկ մարդագետին,
Խաւար տիրեց մթնոլորդին:

Բոնաբարուած աղջիկ տիկին,
Գերի եղած պիղծ քուրտերին,
Սոխակ փոխեց զիւր մեղեղին,
Ողբերգում էր հայաստանին:

Միջոց չկար նոյն և կէտին,
Մարք բոնէին ձեռք մանկը կին,
Փախչում էին յոյժ լալագին,
Սոխակ երգում էր տիրագին:

ի 15 Յունիս 1909 Կ. Պօլիս

ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ

Ուր է մարդ այն տեղ է վարդ,
Ուր է էշ, այն տեղ է գէշ,
Ուր է գիրք, այն տեղ է միրգ,
Ուր կայ հաց այն տեղ դուն կաց:

Ով որ ունի անգամ կին,
Հագուստ նորա պատռած ու հին,
Բարի ամուսին վեր առ քո ուսին,
Զար ամուսին թող տանի լերանց սին
Ամենակին արժէք չունի անխելք մահւ
տեսին:

ի 5 Յունիս 1909 թիւ Կ. Պօլիս

ՈՐՈՇՈՒՄՆ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Ազատութիւն քեզ որոնի.
Վասպուրական ես կանգ առի,
Մատաղ կեանքս կը թառամի,
Սիրտս վառուած պէս Արամի:

Վկայ լինի Աստուած բարի,
Որ պայքարեմ ես միշտ արի,
Վկայ լինի Աստուած անհուն,
Որ պայքարեմ կեանքումս ի բուն:

Բաւ է հայեր ըլլանք ի քուն,
Աւերեցաւ ամբողջ մեր տուն,
Թշուառութիւն եղաւ անհուն,
Հայն էլ մեռաւ կորաւ անուն:

Ազգանունս տէր Աւետիս,
Թող զոհ լինիմ թշուառ ազգիս,
Հառաչում եմ քաղուի հոգիս,
Ազատութեան սէրն ի սրտիս:

ի 15 Սեպտեմբերի 1888 թիւ
ի Վան քաղաքի ի սուրբ Նշան Վա-
րագա Վանի: Միեւնոյն ժամանակ ու-
սուցիչ էի նոյն վանի վարժարանին:
Եղանակ սորա է մայիս ամսու դու
զեփիտիկին:

ՊԱՊԻ ԽՐԱՏ ԻՐ ՈՐԴԻՈՅՆ

Ականատես միշտ եղայ ես,
Վատ թշնամու տուած վէրքիս,
Դառն է կակիծ իմ խեղճ ազգիս,
Կարդա դու զայս աւարտ դասիս:

Մի մոռանար իմ նազելիս,
Տուած խրատս օրիորդիկ,

Մանիր դու բուրդ գուլպայ գործիր,
Օրօրոցիդ իսկ քով նատիր:

Միշտ մանուկիդ խրատ խօսիս,
Հայաստանի անցքեր ասիս,
Աստուած սիրես չմոռանաս,
Հայրենիքիդ զինուոր դառնաս,
Հայ նախատինք շուտով բառնաս:

Այս անգամին մետաքս մանիր,
Նոր մանուկիդ զրօշակ բանիր,
Կորեկի տեղ ցորեն ցանիր,
Հայրենիքիդ վրէժ հանիր:

ի 29 Մայս 1909

Կ. Պոլիս

ԵՐԿԱԹԱԿԱՄՔ Է ԻՉՄԻՐԼԵԱՆ

Իզմիրլեան էք դուք ոսկեհանք,
Հաստատամիտ երկաթակամք,
Շրջապատողդ մարդ չեն տմարդ,
Ազնիւ ծնունդ գլխու էք զարդ:

Մտածում էք դուք անփարատ,
Խեղճ ու կրակ քաշում էք դարտ,
Մինոդ ունիք ինչի պէտք է,
Դիւան ունիք կամքդ կըհերքէ:

Խենթ մշեցին ձեզի կերգէ,
Ցանած սերմերդ յոյժ անբերք է,

Ճարիր քեզի մի հմուտ մարդ, պիտի
Բոլոր վշաերդ անէ փարատ:

Կուսակրօնք աշխատում են, ոչ Ա
Զեզի վրայ գցեն արատ,
Հարուստ մարդուն կանեն աղքատ,
Նոքա մարդ չեն, իսկ են տմարդ:

Արթուն եղիլ քիչ շատ արի,
Իմ ասածներ քեզ են բարի,
Զար գործողաց մուխը մարի,
Ապրիք դուք շատ երկար տարի:

ի 12 Դեկտեմբեր 1909
Դավիթ բաղադ

ԶԱՏԻԿ ԵՒ ԼՈՒՍԱՏԸՆԻԿ

Նուանկում ե երկու կուսակցութիւն

Դու իմ սիրուն փոքրիկ զատիկ,
Էնկեր քո է լուսատըիկ,
Հայք ոչ պահք են և ոչ ուտիք,
Երբ միմեանց գնահատիք,
Իսկ այն ատեն դուք էք մարդիկ:

Պուտ, պուտ, պուտ-պուտ նախուն զատիկ,
Գեղեցիկ է քուկին տոտիկ,
Կամաց եկուր դու ինձ մօտիկ,
Հարցնում եմ քեզ շատ խորոտիկ:

Կարմիր զատիկ սև բիծերով,
Քեզ դիտում են անցող դարձող,
Հայոց համար չիք ոք լացող,
Քեզնից աւել յոյժ գեղեցիկ,
Մութ գիշերով լուսատըիկ:

Այն աստիճան պատառուենք,
Կտոր չկայ որ կարկատենք,
Շարունակեց մեծ պահք երկայն, միջնորդ առջ
Նաւակատիկ հինգ-հինգական:

Չերքէզ և քուրդ որտեղ տեսան,
Կողոպտելով միշտ մեզ թական,
Միանալով մեզ մեռուցին,
Մեր սեփական հող տիրեցին:

Փոքրիկ զատիկ, ինչ ես ասում,
Ընկերանանք, պէտք չէ պարտինք,
Զինուր գրուինք միասիրով,
Զէնքեր առնենք յոյս հաւատով,
Պիտի յաղթենք վեհ Աստուծով:

ի 28 Մայիսի 1909 թիւ Կ. Պոլիս

ԴՐՈՒՅԱՔ ՇԱՆԹ ՏՊԱՐԱՆԻ

Շանթ տպարան է գեղեցիկ,
Իւր մէջ բանող սիրուն անձինք,
Բացուած տուն մենք օրհնեցինք,
Վարդ և ծաղիկ մէջ պահեցինք:

Շանթի տէրն է վեհ Փափազեան,
Խմբագիրն է Պերճ Պարսամեան,
Յաճախորդներ են զանազան,
Տիպար ունի երկնանման:

Խենթ մշեցին նա է տպի,
Արագ կթոչի իբր ամպի,
Խնթառամ է թող շատ ապրի,
Տառ գեղեցիկ նա կըտպի:

Ղազարոսն է Փիլիպոսեան,
Հանճար ունի խիստ զանազան,
Անվեհեր է Վարդան Մամիկոնեան,
Նա լաւ գիտէ զիւր գործած բան:

Պարոն Արամ Կոշկակարեան,
Յովսէփ պարոն Ճըզմաճիեան,
Սէգ Յարութիւն է Մալխազեան,
Պարոն Վահրամն է Դերձակեան:

Ընկեր սոցա Խաչիկ Մաքեան,
Միւս Խաչատուրն է Մէքիկեան,
Սոցա տանտէր վեհ Փափազեան:
Կեցցեն գոքա սիրով միաբան:

Վերոյիշեալ տպարան նոր բացուեցաւ, 1909
թիւ ի 15 Մայիսի, ի Կ. Պօլիս Ղալաթեա կա-
մուրջի գլուխը, որուն խմբագիրն է ու մեծ հե-
ղինակ պարոն Մերուժան Պարսամեան, խսկ տը,
պարանի տէրն է, պարոն Վահրան Փափազեան:
Տապարանի հիմնարկութիւնը առաջին անգամ ես

օրհնեցի: Խենթ մշեցի կամ Ղետնդ քահանայ
տէր Սւետիսեան, խսկ միւս անունները որ յի-
շեցի բանաստեղծութեանս մէջ, նոքա էլ տպա-
րանի գրաշար գործաւորներն են:

ի 2 Յուլիս 1909 թիւ ի Կ. Պօլիս
Նախը տպարանում գրեցի որ է Ղալարիս

Տէ՛ր-Տէ՛ր Եհ ՏիրՈՒչին

Մին տիրուհի և մին տէր-տէր մարդ
Որդի ծնան անուն Մէհեր,
Թաջ արի էր, բաւական գէր, դժշանջ
Աստուածապաշտ ուսումնասէր:

Մէհեր գնաց լերան ստորոտ,
Աղբիւր գտաւ, եղերք կար խոտ,
Ծունկի եկաւ, արեց աղօթք,
Երկինք գոռաց խիստ մեծ որոտ:

Զայնեց իսկոյն մեծ Սաբաւոտ,
Սոսկաց Մէհեր գառաւ մի հորթ,
Արածում էր միշտ կանաչ խոտ,
Գլուխ վէրք էր, մարմին բորոտ:

Պատճառ դառան տէր-տէր իւր կին,
Որ մուտք գործին կիրակմտին,
Զըպահեցին էն սուրբ օրին,
Փորձանք բերին խեղճի գլխին:

Օքինակ առնեն, նոր տէրտէրներ,

Մաքուր պահեն զայն սուրբ օրեր,

Թող չարածեն արտ ու ափեր,

Կը բորտեն կընկնան սարեր:

ի 12 Սեպտեմբերի 1911 թի
Դավթիծ

ՆՈՐԱ ԵՆ ԿՈՂՈՊՏԻՉ

Երբ գնացի Վանա կտուց ,

Հիւանդացայ գինւոյ հոտուց ,

Կըղերք ժողւած էին մի խուց ,

Զխաչեր հալին ատէն էր հունձ :

Կենդանի է տէր Արարիչ ,

Իսկ նոքա են վանք կողոպտիչ :

Գիտցած ըլլաք կըտուց վանք է ,

Նոցա սահաթ խաչէն թանգ է ,

Քըննիչ նրանց պէտք և անկ է ,

Եկեղեցին դէռ անզանգ է

Կենդանի է տէր Արարիչ ,

Իսկ նոքա են վանք կողոպտիչ :

Բարի կղերք զիս պատուեցին ,

Դասատրութիւն ինձ յանձնեցին ,

Իրառնաքիս կէս կլեցին (կուլ տուին)

Իրենց մտօք անպարտ մնացին :

Կենդանի է Տէր Արարիչ ,

Իսկ նոքա են վանք կողոպտիչ :

Մազէ լաթով սուրբ ձեացան ,

Իրառնաքիս կէսն ուրացան ,

Մակոյի նստան , զծովն էլ անցան ,

Իսպառ նոքա զԱստուած մոռցան :

Կենդանի է տէր Արարիչ ,

Իսկ նոքա են վանք կողոպտիչ :

Վարդան եմ ես իսկ Մշեցի ,

Շատ ժամանակ պանդուխտ մնացի ,

Յերուսաղեմ եղած ատեն ,

Ի կղերաց դժգոն մնացի :

Վկայ լինի Աստուած հարանց ,

Որ բողոքեմ հանդէպ նրանց :

ի 5 Մարտի 1881 թիւ Վան
Բաղաքի Կուոց անապատի Վանելումբ գրեցի

Վերոյիշեալ ի 5 մարտի 1881 թուա-

կանին ուսուցիչ էի այդ կտուց անա-

պատի Սուրբ Կարապետի վանքում ,

որ գտնուում է վանայ ծովու մէջ :

Իմ վարժապետութեան ատեն բարե-

պաշտ միաբաններից ինձ միշտ պատ-

մում էին վանքի անցեալ դրութիւնը

թէ ինչպէս մի անգամ վարդապետաց

միաբանութիւն վանքի արծաթեղէն-

ներ մեծամաս խաչեր հալեցին ծախե-

լով իւրացրին , առարկելով իբր թէ՛ թի-

թեղ պիտի քաշէին եկեղցւոյ կտու-

րի և կաթուղիկէի վրայ. այդ ասելով
լսողներին խաբեցին և այդ մեծագուշ-
մար դրամը իւրացրին: Ոմանք վար-
դապետներէն սոյն դրամով ժամա-
ցոյց առին, այդ պատճառաւ է, որ
հեղինակս (այսինքն ես, որ հեղինակն
եմ) ասում է սահաթ կղերաց խաչէն
թանգ է: Իմ աչքի տես, վարժարանի
գիշերօթիկ աշակերտներին կերակուրն
էր միմիայն լուկ թանապուր, իսկ
վարդապետները ուտում էին երե տե-
սակ կանոնաւոր կերակուր: Նոյն լէս
միաբան մշակներ ու հոտաղներ ու-
տում էին լուկ ապուր: Ութ տարե-
կան հասակէն սկսեալ ձըրիապէս
ու ամենահաւատարիմ ծառայել էր
վանքին մինչի եօթանասուն հասակում,
մի ծերունի ալեսոր, ամենազառամեալ
աչքի լոյսից և անձի ուժից ընկած-
դա էլ նոյն լուկ ապուրից ու թանից
էր ուտում: Ես շատ անգամ տնտեսա-
տան կը գնայի իմ բաժին կերակու-
րից պապին կտայի, ուտելով ինձ օրհ-
նում էր ու արտասուք թափելով վար-
դապետներին կանիծէր: Մի օր էլ
յանկարծ պապին փակայի առջևէն
ընկել է ու մեռել: Այս էլ այսպէս

տեսայ: Իմ վարժապետական վարձքէս
էլ մի մաս կերան այդ պատճառաւ
հեղինակս ասում է իրաւունքիս կէսն
էլ կլեցին: Ահա մի խնդալու բան
պատճեմ, մի օր վանքում քէշկէկ էին
եփել, երդում չեմ ընել մեծ մէղք է
բայց ճշմարիտն եմ ասում, տասներ-
կու գրուանքանոց եօթն պընակ քէշ-
կէք կերան երեք վարդապետներ:
Էն Աստուած է վկայ, որ սուտ չեմ
ասում, մինչև հիմա օւշքս ու միտքս
էլ էն քեաշկէկի վրան է մնացել,
շան տղէք ինձ էլ բաժին չթողին:
Բանաստեղծութեան մէջ ես հեղի-
նակս ասում եմ հիւանդացայ գինոյն
հոտուց այն առթիւ եմ ասում, որ վանք
գտնուում է ծովի մէջ, իսկ ծով եղերք
կայ շինուած տուն որուն մառաններ
գետեղուած են գինու մեծամեծ կա-
րասներ ուր նրանց մէջ պահուած
կայ անուշ կարմիր հին գինիներ, որ
ըմպում են վանքի սուրբ աբեղաները
եղեցի գնալու ատեն, կը նմանին ան-
մեղ գասների:

ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ ՍԵՌԻՑ

Տէր-տէր կայ տէր է, (կոչման համաձայն է,)
Տէր-տէր էլ կայ անվիներ է,

Տէլ-տէր էլ կայ ժողովրդի հէր ու մէր է,
Տէլ-տէր էլ կայ Աստղօյ հետ սէր է,
Տէլ-տէր էլ կայ խողի նման խոկ գէր է,
Տէլ-տէր էլ կայ աղջեն վտանգ կրերէ,
Այդպիսին չըլի շատ էլ խէր է:

Մարդ կայ մարդ է,
Մարդ էլ կայ վարդ է,
Մարդ էլ կայ տմարդ է,
Մարդ էլ կայ խարդ է (կոշտ)
Մարդ էլ կայ յարդ է, (յիմար)
Մարդ էլ կայ խելքէ բարդ է, (շատ խելացի)
Մարդ էլ կայ ճամբայ կը հարթէ,
Մարդ էլ կայ իրնն վիշտ կբարդէ, (շատ մտածող)
Մարդ էլ կայ սև սարդ է, (սատանայ)
Մարդ էլ կայ սուտ ու փուտ միշտ կջարդէ,
Մարդ էլ կայ գլխի զարդ է, (հասկացող է)

Կին կայ կին է, (պարտաճանաչ է)
Կին կայ հին է, (փորձառու է)
Կին կայ մին է, (յատուկ է)
Կին կայ սին է, (յիմար է կամ պարապ վլուխ)
Կին կայ ճին է, (սատանայ է)
Կին էլ կայ անգին է: (ամենապարկեշտ)

Հարս կայ հարս է, (բանիբուն պարտաճանաչ)
Հարս էլ կայ կերած չի մարսէ, (խրատ չընդունող)
Հարս էլ կայ ճերմակ վարս է, (փորձառու է)
Հարս էլ կայ միշտ կը բամբասէ, (քսու է)
Հարս էլ կայ կերած կը մարսէ (խրատ կընդունի)
Հարս էլ կայ արտասուր հնուսէ, (նուրբ զգացում)
Հարս էլ կայ կեցած տուն բանտ ու փոս է, (անարգւած)
Հարս էլ կայ շատախօս է, (բօշքօղազ)

Հարս էլ կայ քրտնքի տեղ արին կըհոսէ, (աշխատասէր)
Հարս էլ կայ խելահաս է, (բանիբուն կրթուած է)
Հարս էլ կայ գերագոյն անհաս է, (Աստուածածին է)

Օրիորդ կայ օրիորդ է, (պարտաճանաչ է)
Օրիորդ էլ կայ որդ է, (ուտիճ կամ մուռ է) —
Օրիորդ էլ կայ խորդ է, [վայրենի է]
Օրիորդ էլ կայ խորդ ու բորդ է, (վարքից ծուռ է)
Օրիորդ էլ կայ քամած իւղի թորդ է, [կոշտ ու կոպիտ է]
Օրիորդ էլ կայ հորթ է, (ախմար է)
Օրիորդ էլ կայ անհարազատ ու խորթ է,
Օրիորդ էլ կայ սրբամորթ է, [Աստուածածին]

Մանուկ կայ նոյն է, [անտարբեր է]
Մանուկ էլ կայ անգոյն է, [անյայտ բնութիւն]
Մանուկ էլ կայ ճերմակ ձիւն է, [ճարպիկ է]
Մանուկ էլ կայ անքուն է, (չար է)
Մանուկ էլ կայ ապրանք ու տուն է, (յուսալի)
Մանուկ էլ կայ ծնողաց սրտի սիւն է, (սիրելի)
Մանուկ էլ կայ սիրոյ բուն է, (Փրկիչն է)
Մանուկ էլ կայ անհասանելի և անհուն է, (Յիսուսն է)
Նախ պէս է կարդալ գրուած անուններ եւ յե-
տոյ փակագիծների միջի բացատրութիւններ:

ի 5 Մայիսի 1909 թիւ

Կ. Պօլիս գրեցի Գատի գիւղում

ԽՈՍՏՈՎԱՆԱՀԱՅՐ եհ ԱՅԾԻ ԳՈՂ

Հեղինակ) Մէկ գիւղացի այծ է գողցի,
Մեղք զգալով շոտ է լացի,
Խոստովանքի է գնացի,

Այծի տէրն էր խեղճ զբացի:
 Գող) Այծ մը գողցայ ես հոր հապա,
 Մեղայ քեզի իմ տէր բաբայ,
 Այսօր կամ վաղ կանեմ թօպա,
 Մօրթին տամ քեզ շինիր կապա:
 Տէր-Տէր) Ա՛խ իմ տղաս վատ բան է դա,
 Հայի գողութիւն եղաւ մօդա, (նորութիւն)
 Հանուելձելում այծն էլ կը դայ,
 Գողութեանդ վկայ կապա:
 Տէր-Տէր) Դասի կանչէ, քեզ տէրն անեղ,
 Այծն էլ կըդայ, անշուշտ այնոտեղ,
 Գողութիւն է, վատ և տպեղ,
 Վճարիր զիին զնայ ձեր զեղ:
 Գող) Երբ կանչեն զիս նոյն դատարան,
 Տէրն անդ կըլլայ նոյն և հետան,
 Վկայ կտայ իսկ այծն մատամ,
 Բոնելուս պէս տիրոջ կտամ:
 ի 25 Յունիսի 1909 թիւ
 Կ. Պօլիս

ԿԱԽՈՒԱԾՆԵՐԸ

Արժան ընտիր Սուլթան հինգերորդ Մուհամեդի թագաւորութեան եօթներորդ օրն էր երեքշաբթի ի 20 Ապրիլի 1909 թիւ, Դատի գիւղէն շոգէնաւ նստայ անցայ Ղալթիայի կարմնջի գլուխ, մօտ Ենի-Զամու առաջ, տեսայ

մի խուն բազմութիւն տիրուր հանդարտ:
 Անցող դարձողին տիրում էր մեծ տիրութիւն:

Զի անդ կային երեք անձինք,
 Միենոյն շարքի վրայ կախուած,
 Պատանքի տեղ շապիկ հազած,
 Նոյա յանցանք կուրծքին գրուած:
 Նոյն տեսարան Սուլթան Պէյազիտ,
 Կրկին ևս կար պատրաստած,
 Երեքի տեղ հինգ հատ կախուած,
 Խուն բազմութեան տիրուր տիրած:
 Փողովուրդք իրար ականջի,
 Փսփսալով ասում էին,
 Արդարութիւն այսովէս է տրամադրած,
 Որովհետեւ այս կախուածներ,
 Զարութեան նիւթ էին տուած:

Ոմանք մարդկանց ասին միմեանց,
 Այս կախուածներ չար են գործած,
 Այդ առթիւ են դատապարտած,
 Ցանած սերմին արժանացած:

Սօֆթաներից են կաշառուած,
 Ցիսունական ոսկի առած,
 Զար սուլթանի կամք կատարած,
 Կախողանին արժանացած:

Իսկ խիստ վատ է շատ մը մարդկանց,
 Ապերախտ են ու պարտազանց,

Հոգով կորած պատճառն է դանձ,
Անզգայ են չեն գալիս դարձ:

ի 20 Ապրիլ 1909 թիւ
Կ. Պօլիս

ՆՈՒԷՐ Ա.Ռ. ՕՐ. ԻՍԿՈՒՀՃԻ
ՆԱԶԱՐԵԱՆ.

Դու օրիորդ վեհ Նազարեանց,
Զգացում ունիս իսկ չափազանց,
Պերճ պարծանք ես դու հայկազանց,
Բնութիւն ունիս բարձր գերազանց:

Ազնիւ որդի դու մէկ հատիկ,
Քո հայրն ու մայրն են երջանիկ.
Չուտ ես բնութեամբ չունիս էւղծիք,
Դստեր շարքում կաս անհատիկ:

Քաղցր բարբառ ինքդ ես դոհար,
Բարեաց գործոց միշտ անդատար,
Վարքով բարքով չես անկատար,
Շատ վէրքերի դարմանատար:

Տեսայ զքեզ քաղաքավար,
Խօսքեր ունիս մարդարտափայլ,
Պարտումանաչ ազնըւափայլ,
Գնահատող միշտ անդատար:

Ազնուազոյն ես Խսկուհի,
Արժան ես դու մեծ պարզեի,

Քեզ կնդունեմ ինձի որդի,
Են դաս դասուիս սուրբ նախորդի:

Իմ որդին ես դու յոյժ անկեղծ,
Հայր Ղեւոնդ եմ միշտ բանաստեղծ,
Անարատ ես դու անտիւեղծ,
Զարիքներէ ապրիս իսկ զերծ:

Խսկուհի օրիորդ Նազարեան Պօլ-
սուոյ Գատի զիւղացի: Ապրում է այ-
ժմ Մօրտարի թաղում: Սոյն բարե-
պաշտ հայ օրիորդ մեր եկեղեցիներին
շատ նուէրներ ու նպաստներ տուած
է և իւր համեստ բնաւորութեամբ իմ
գրքուկիս մէջ բանաստեղծութեամբ
յիշատակեցի:

ի 4 Յունիսի 1909 թիւ
Կ. Պօլիս

Ա.ՊԱԼՈՄՆ ԱՄԲԱՐՏԱԿԱՆԻ

Անգութ անմիտ մորթեց հային,
Անասնագոյն վատթար չամիդ,
Պղծեց սուրբ գահ նախորդներին,
Խիստ չար գործեց անհատներին:

Հրաման արաւ ցած արարած,
Մորթել գհայք համատարած,
Բարձրացնում էր վառք իւր մնապանծ,
Զար սիրտ նորա էր քարացած:

Զինք կարծում էր միշտ ախոնեան,
Պալատ շինեց երկնանման,
Չար էր գործում միշտ անպլիատն,
Տապալեցաւ հանդոյն գեհեան:

ի 5 Յունիս 1909 թի
Կ. Պօլիս

ՍԻՐԱՀԱՐ ՄԱՆՈՒԿ ԵՒ ՕՐԻՈՐԴԻ

Օրիորդ

Ուսումնարան մեր գիւղական,
Ես օրիորդ և շինական,
Բարի եկար պարոն Տիրան,
Քեզի համար իսկ միշտ ես կեամ:

Տղան.

Ուսումնական եմ քաղքըցի,
Անխելք աղջիկ ես Առեցի,
Խելքէդ մոքէդ բան է անցի,
Գնա կորիր, կոշտ գիւղացի:

Օրիորդ

Գիւղի անուն մեր է Հողաս,
Երբ զիս տեսնես իսկոյն դողաս,
Ոչ չուլ ունիք, ոչ մի փալաս,
Չես հաւնիր ինձ ծախում ես նազ:

Մարմինդ բորոտ, գլուխդ տազ,
Ոտքերդ երկար նման ես զազ,

Շորերդ սե է իբրև մի լազ,
Արիւն փրսխիս միշտ ունիս հազ:

ի 10 Յուլիսի 1886 թի
Քղի աւան ի Հողաս

Հետևանք կը ընայ ըլլալ գիւղացի
աղջիկ մը աւելի խելացի ու կը թեալ
քան զքաղաքացի տղան, երկրորդ խե-
լացին ուրիշի պակասութեան վրայ չը
ինդայ իբրև մարդ որ և է ինքն էլ մի
պակասութիւն կ'ունենայ:

ՎԻՐԱՀՈՐ ՀՈՎԻԻ ԵՒ ԻՒՐ ՈՐԴԻՆ

Հարց որդոյ

Հովիւ-հովիւ, առ քեզ բարև,
Է՞ր նստել ես լերանց վերև,
Ման ես գալիս, խորշ-խորշ ձորեր,
Զով օդ ծծում ամեն օրեր:

Սրինգ կածես մեղմիկ օդով,
Հայրենիք քո խուժ, դուժ, բողով,
Վրադ ծածկել ոչխար մորթով,
Շատ ես երգել գարձել թոթով:

Քաջ իմ հովիւ եկ ինձ մօտիկ,
Դուն խորոտիկ նիստ իմ քովիկ,
Բոնիր ցուպիկ, ել դու դաշտիկ,
Արիւն կը վօթէ քո հայրենիք:

Պատախանի հօր

Մարմանդ հովիտ ես ման կը գամ,
Եկ, քեզ պատմեմ մի թագուն բան,
Մեզի մորթեց պարսիկ պիղծ խան,
Մեր ջուր դառն է հացն էլ անհամ:

Քիւրդ ու չերքէզ, պարսիկ անգութ,
Բոնի տարին զոչխարս անփոյթ,
Հինդ հարիւր էր մաքի և զուտ,
Յաւս ում պատմեմ, որուն է փոյթ:

Գիւզո թալնին աւար առին,
Էլ ինչ ասես մեզի չարին,
Ոտքերս կոտրին սիրսս փարին,
Իմ քաջ շները ևս տարին:

Յոյսս դու ես, իմ քաջ որդիս,
Վրէժ լուծիս փոխանորդիս,
Վատ է վիճակս, դառն է կոկիծս,
Էլ ինչ ասեմ քաղուաւ հոգիս:

Որդին

Աստուած տայ որ գու չմեռնիս,
Երդում կանեմ ես իմ սրիս,
Յետ պիտ առնեմ ազգիս գերիս,
Կը հասկնաս իմ հեր դուն ես:

ի 6 Յունիսի 1909 թի
կ. Պոլիս

ԿԱՍԿԱԾ ՄԱՐԴԿԱՆՑ ԴԼՊԻ

ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

Զարմանք մարդկանց առ վեհ Աստուած
Ասում են թէ չկայ Աստուած,
Բազմաթիւ հայ են կոտորած,
Իշնւ համար թոյլ է տուած:

Գութ ունի նա համատարած,
Նա խստութիւն բնաւ չէ արած,
Մարդիկ միմիանց հետ լաւ չեն վարված
Տէրն գթոս է միշտ ողորմած:

Օրինակի համար

Դրամ ունիս ի խանութի,
Ինքդ էլ ունիս երկու որդի,
Մին փոքրիկ է, միւս մեծատի,
Յանձնիր որդւոցդ գնացիր բանի:

Վերադարձիդ դրամդ են տարած,
Որդիներդ խաղով բռնուած,
Դրամ արկղին հոգ չեն տարած,
Ամբողջ դրամ գողեր տարած,
Երկու տղոցդ դատ քեզի յանձնած:

Երկուսից որն պիտի պատժես,
Փոքրին թողած, մեծին կընտրես,
Նրան կասես խելահաս ես,
Փոքրիկից գու ինչ կսպասես:

Մենք Աստուծոյ ենք ժողովուրդ,
Նա փրկեց զմեզ ամենագութ,
Միշտ խրատեց մեզ, մնացինք անփոյթ,
Մեզնից շատեր են անօգուտ:

Քեզ կհարցնեմ ո՞հ պարոնիկ,
Աստուած գառնաս իսկ մին օրիկ,
Փոքրին կպատժես թէ մեծն Օննիկ,
Ի՞նչ էք ասում դուք էս բանիս,
Մեծ պարոններ Պերճ էֆէնդիք:

Անշուշտ կասէք, պատժուի Օնիկ,
Թալնել տուաւ հօը խանութիկ,
Նոյնպէս էլ մենք մարդոց որդիք,
Պիտ պատժուենք խիստ խորոտիկ:

Սոյն օրինակ մենք քրիստոնեայք,
Նախախնամէն մենք ենք ընտրեալք,
Հաւատարիմ իսկ չենք նորին,
Դալար կը վառուի հետ նոյն չորին:

Երբ ճանաչեմք պարտիկ մերին,
Տէրն կսպասէ ապագային,
Հարկաւ կպատժէ մոլի քրդին,
Դեղ պիտ ցանէ իսկ մեր վէրքին:

Մի լինիր դու թերահաւատ,
Աչօք կտեսնես քո ապագատ,
Հաւատացիր դառնաս մի զատ,

Ահեղ Աստուած արդար է վատ:
ի 10 Յունիսի 1909 թիւ
Կ. Պոլիս Գատի գիւղ

Շատ անգամ թերահաւատ մարդկանցից լսել եմ, որ ասել են, եթէ Աստուած կայ, ինչու համար թոյլ է տալիս հարիւր հաղարաւոր մարդիկ կոտորել Սուլթան Համիդ: Եւրոպայում մի անգամ անհաւատի մը մէկ, ինքն իրան ասելով, ով է այդ քրիստոս, որ գիշեր ցերեկ, քրիստոնեայք սորա անունով խօսում են, ահա ես մի քրիստոնեայ կսպանեմ, տեսնեմ թէ այդ քրիստոս ինձ ի՞նչ է անելու, ու իսկոյն քաղաքից դուրս մի քրիստոնեայ ծածուկ սպանում է, ու թողում գնում և ոչ ոք էլ դորա մարդասպանութիւնը չի տեսնում: Իսկ երբ կառավարութիւն կը լսէ այդ բան, իսկ կոյն ոստիկան ժանտարներ զրկում է քննութեան և միանգաւայն անցող դարձող ժողովուրդն էլ կը հաւաքուի սպանուղի գիակի շուրջը՝ պարփակելով մեծ բազմութեամբ: Եւ այդ բոպէում մի փոքրիկ շուն մէջ տեղն է գալիք և արագ—արագ պատյառ է գալիս մեռած գիակի բոլորը: Երես դարձնե-

լով պարփակող մարդկանց երեսին
ուշադրութեամբ նայելով մի քանի
անգամ շարունակում է իւր պտոյտը,
այնպէսմարդիկորհեռանալովմիմեանցից
իսկոյն և եթ վազում է մարդասպանի
կոկորդէն կծում ու կախվում, ոստիկա-
նապետ պահանջում է խոստովանու-
թիւն, իսկ մարդաըսպան նշո՞նացի
յայտնում թէ՝ շունից ինձ աղատեցէք
պատմեմ իսկութիւն, ու երբ ազատե-
ցին նրան, իսկոյն խոստովանեցաւ թէ՝
ինքն է այդ մարդուն ըսպանի: Լաւ,
ասացին, ի՞նչ հակառակութիւն ունէիր
սա մարդու հետ որ չարաչար ըսպա-
նիր: Պատասխանում է մարդասպան
թէ ես ոչնչից ոչինչ հակառակութիւն
չունէի այդ մարդու հետ. իսկ միմ-
եայն ես անհաւատ եմ և շատ անգամ
լսած էի քրիստոնեաների բերնէն, որ
միշտ քրիստոսի անուամբ կը խօսէին.
և ես էլ ինքս ինձի ասացի, մի քրիս-
տոնեայ կըսպանեմ տեսնեմ թէ ոը-
րանց քրիստոս ինձ ինչ է անելու.
և այդ պատճառաւ ըսպանի որան:
է լաւ, պարոն, ասացին ոստիկաններ.
ահա, տես մեր քրիստոսն էլ այնպէս
մի քրիստոս է որ շունը շնով խեղդել

կըտայ: Ընթերցող պարոններ, միենոյն
շունը ոչ սպանողին էր և ոչ էլ ըս-
պանուղին, այլ մի ուրիշ եկողներէն
մէկուն էր:

ՄԱՏՆԻՉ ԴԱՒԻԹՅ

Զար պիղծ դու Դաւիթ վանադավաճան,
Սզգդ ուրացող երկրորդ Մերուժան,
Քեզ առիթ տուող անարդ է միայն,
Քեզի հաւասար այժմ և յաւիտեան:

Զեր սև յիշատակ իբրև կարկատանք,
Անմոռանալի հայուն անարգանք,
Ինչ չարիք հասաւ խեղճ ժողովրդին,
Սուր դնել տուիք նոցա կոկորդին:

Արժան և անարդ վատին պարսաւանք,
Դուք աղնիւ ծնունդ հանգոյն չդառնաք,
Յուդայի անէծք լինի այս մարդին,
Որ առիթ կտայ սոյն չար մակարդին:

Սոյն մատնիչ անուն իրենց կըբարդին,
Վատ կըյիշուի անուն կախարդին,
Զարեաց ճանապարհ նոքա կը հարթին,
Այս պատճառաւ է հային կըջարդին:

ի 29 Մայիսի 1909 թիւ
Կ. Պոլիս

ՈՂԲԱԼԻ ՀԱՅ ՏԻԿԻՆ

Առաւօտեան արշալոյսին,

Առխակ նստել ծառի ճղին,
Երգում է նա միշտ գեղեցիկ,
Խիստ հաճելի զիւր մեղեղին:

Աչքեր դարձուց դէպ հայ տիկին,
Մորմոքում էր նա զառնազին,
Քիւրդ ըսպանած զիւր ամուսին,
Բռնաբարած նորա հարսին:

Օրօր կասէր որք մանկրին,
Աչքեր դարձուց դէպ սոխակին,
Հեծեծում էր յոյժ դառնազին,
Դեղեցկուհի հայի ափիկին:

Սև էր քօղի, իւր երեսին,
Կուլար կողբար զիւր ամուսին,
Կորուցեր էր միակ որդին.
Անուն նորա քաջ Աղասին:

Որչափ կուգես սոխակ երգէ,
Ոտքէս ցզլուխ բոլոր վէրք է,
Թշնամին իմ անգութ թուրք է,
Ինձ մահանալ շատ մեծ փառք է:

յ 30 մայիս 1909 թիւ
Կ. Պոլիս Գասի գիւղ

Հալածումն զբարտութեան ի 15
մայիս 1909 թիւ կհալածէ, Մշեցի Ղե-
ւոնդ քահանայ Տէր Աւետիսեանին
Դավթէժ քաղաքէն, Սահակ Եպիսկոպոս
Այլատեանը: Պատճառ սա է լինում,

մի օր գիշեր ատեն Եպիսկոպոսի ծա-
ռան, սպահանցի Օհան առաջնորդարա-
նէ գնում է պարոն բժիշկ Առան-
եանի տնէն բերելու Եպիսկոպոսին,
որ նոյն օրը բժշկի տան հիւր էր-
կանչուած Եպիսկոպոսը: իսկ ճանա-
պարհին պատահում է մի սայիդ, որ
բաղնիք էր գնում, ուամազանի առթիւ:
Օհան կարծում է թէ այդ անցորդ
սայիդ անսպատճառ տէր Ղեոնդ քահա-
նան կլինի, որ եկել էր Եպիսկոպոսին
ըսպանելու: ընդհակառակ, խեղճ քա-
հանան մի շաբաթ առաջ Էնֆիլից հի-
ւանդութեամբ պառկած է լինում, և
մինույն ժամանակ պարոն Պետրոս
Առանեանէն գեղ էր ստացել, հիւան-
դութեան առթիւ: և այդ բանն բժիշկ
Առանեանին քաջայայտ էր: իսկ Սա-
հակ Եպիսկոպոսը առաւօտեան իսկոյն
ժողովի կը հրաւիրէ Զաքար Նազար-
բէկեան և Նազար էֆէնդի Գորոյեան
ու մի քանի այլ անձինք ևս և ասե-
լով նրանց, թէ ստորագրեցէք, որ տէր-
Ղեոնդ Տէր Աւետիսեան եկել է ինձ
սպանելու, իսկ նոքա բացարձակ մեր-
ժում են Եպիսկոպոսի յառաջարկու-
թիւնը ասելով, որ այն ենթադրու-

թիւն է, ոչ թէ մի փաստ. Այլատեան
տեսնում է, որ իր նպատակին չըհա-
սաւ իսկոյն կանչում է անհաւատ ու-
սուցչապետ Տիրան Ռասմաճեանին ու-
անմիջապէս մարդասպանութեան բո-
ղոք է գրում նորին վեհափառութեան
Խրիմեան Հայրիկին՝ Ղեոնդ քահանայի
վրայ, և տալիս է Ռասմաճեանին ըս-
տորագրել, նոյնպէս իրեն նման 22
հոգու ստորագրել է տալիս. որոնցից
մի քանիսի անուններ այստեղ կըյի-
շեցնեմ Թումանեանց առաջին գործա-
կատար Բալենց Բաղդասար որ այժմ
մեռած է, Սեղրակ վարժապետ Յարու-
թիւնեան, Երուանդ Ֆլուանգեան, վեր
ջապէս Լիլաւա թաղի այն ժամանակի
բոլոր ուսուցիչները որոնց մէկն էլ
Յարութիւն Մարտիրոսեան էր, իսկա-
պէս ըստորագրողներ մեղաւոր չէին
վասն զի եպիսկոպոսը իրենց գործիք
գարձնելու համար պարտաւոր էին ըս-
տորագրելու Իհարկէ եպիսկոպոս էլ
մեղաւոր չէր վասնզի նրան պատմել
էր մի տիկին, որ նախօրօք Այլատեա-
նի ամենահաւատարիմ ու սիրելին էր:
Տիրինս էլ մեղաւոր չէր, խեղճ վաղօ-
րօք ասել էր եպիսկոպոսին թէ տէր
Ղեոնդ կըդայ քեզ կուպանի որպէսզի

Եպիսկոպոսին աւելի բարեկամ դառնայ
նրա փողերը շորթելու համար: Ահա
եպիսկոպոսի քսաներկու ստորագրու-
թեամբ բողոքագիրը գնում է Տփիիս
քաղաք Նորին վեհափառութեան Խը-
րիմեան հայրիկի ձեռքը, որն որ կար-
գագուրկ է անում խեղճ Մշեցի տէր
Ղեոնդ քահանային: Ահա սորա հա-
մար է, որ տէր Աւետիսեան բանաս-
տեղծութեամբ խնդիր է գրում նորին
վեհափառութեան հայոց Հայրիկին:
Նորին վեհափառութեան Տ. Տ. Ա. Մրբանա-
գոյն Մկրտիչ Կարուղիկոս Ամենայն հայոց

Ամենախոնարի խնդիր ա. Տէր Աւետիսեան
Ղետնդ հահանայէ Մշեցւոյ
Ղետնդ

Վեհափառ իրաւունք տնտեր, գու իմ
տէր,
Որ ես կարդամ զայս խնդիր անվեհեր
Կամ տուր իմ սրբազն աւետարան,
Կամ թէ ամեն մարդու մեղք իր վզին
գիր,
Ես ունիմ բազմաթիւ եղուկ
զաւակներ,
Միրուս ալեկոծվում է հանգոյն ծովու
կոհակներ,

Հայրիկին դիմող բաւականութիւն ըստ
տացել են ամեն հայ անհատներ:
Հայրիկ

Ես եմ հայոց գորովագութ հայրիկ,
Մինչցարդ ոչ ոքի սիրտ կոտրած չեմ,
Մահակն է որդիս, իսկ Ղեռնդ թոռնիկ,
Երկուսդ էլ հարազատ էք ինձ ոչ թէ
պլունիկ,

Սահակ

Հայրիկ Ղեռնդ անպիտան իւառնա-
կիչ քահանայ է,
Ինձ վերայ վեց բացուած արձակեց,
Բարոյապէս ոտք ու գլուխս թակեց,
Իր խեղճ որդոց դուռը փակեց:
Հայրիկ

Սահակ իմ որդի, վեր առ արժազան
աւետարան,
Կարդա գու զայն համար մեծատան,
Լաւ հասկացիր մի լինիր տնբան,
Տէր Ղեռնդ Յիսուսի է սան:

Եկ, իմ որդի Սահակ, ինձի լսիր,
Օճառի տեղ երեսիդ միւռոն քսիր,
Շատ անարդանք նրան ասիր,
Տիրոջմէ գու մի քիչ սասոսիր,
Զրպարտութիւն խեղճին ասիր:

Հայրիկ

Տօ անպիտան ծուռ Մշեցի,
Պատուի փոխարէն կեանքս մաշեցի,
Մինչ ցարդ ինչեր ես քաշեցի,
Քեզ գթալով, էլի յիշեցի:

Ղետնի

Հաւատացի վեհափառ տէր,
Ես միայն եմ ինն որդու հէր
Մահակ անխիղճ, ես անվեհեր,
Չկայ մեր մէջ իսկական սէր:

Հայրիկ

Այ որդի վեր առ վարք սրբոց կարդայ,
Նոյն քահանան էլ մի մարդ ա,
Ներող եղիր ոչ թէ լրթա, (լիրք)
Ազնիւ լինելդ մի մեծ զարդ ա:

Սահակ

Զէ, չէ, նա հոգևոր իշխանութեան դէմ
մեծ մեղք գործեր է,
Բացի ինձանից ուրիշ հոգևորականնե-
րին էլ փորձեր է,
Ինձ գէմ գործած չարիք մոռցեր է,
Նորեն այսուեղ վերադարձել է:

Ղետնի

Հայրեկ մեղա մեղա թնդ վկայ լինի
սուրբ Մինոդ,

Ոչ հրացան ունիմ ոչ թնդանօթ,
Սահակ խիստ է անողոք, (անխիղճ)
Իսկ անտեղի է նրա բողոք:
Սահակ
Վեհափառ տէր, թող տուր սրան մի
լաւ տանջեմ,
Նա կարծում է որ ես մի ճանձ եմ,
Պէտք է որ ես վրէժս լուծեմ,
Այն ժամանակ հանգիստ կհանգչեմ:
Հայրիկ

Սահակ բաւական է Դևոնդին տաս
նեղութիւն,
Իբրև մի հայր տուր թողութիւն,
Իմ հրամայեած կոնդակ տււէք իրան,
Նրա զաւակներ ունին մեծ նեղութիւն
Քեզի կանիծեն միշտ օրն ի բուն:
Իսկ մէկ չկայ ասէ Դևոնդ քահանայ
Իզուր տեղ ես ծեծում դու չանայ (ծը
նոդ)
Տեսնում ես քեզ օրէօր յետաձգելով,
Դրանք բոլորն էլ են մահանայ: (պատ-
ճառ)

Մնամ հաւատարիմ ազգիս Պետոնդ
բահանայ Տէր Աւետիսեան Մշեցի
Իսկապէս արգարութիւն յաղթող
է, այդ ժամանակում, Եպիսկոպոսի

ծառան Օհան լիենթանում է: Իսկ Սա-
հակին անպատիւ կերպով թաւրիզեցի-
ներ վանդում են, իսկ Դևոնդ քահանան
Սրբատառ կոնդակով կրկին իր պաշ-
տօնին է վերագառնում:

ՄԱՐԻ ՀԱՀ ԵՒ ԲԱՋԻՆ

Մարի-մարի քո գալդ բարի,
Զագուկներդ մվ է տարի,
Զագերս տարաւ վայրենի հիւր,
Ապերախտ է սոյն վատ ուրուր:

Լափեց կերաւ սրտիս հատոր,
Կոկիծ ու ցաւ ունիմ ինտոր,
Թէպետ արև ինծի սկ օր,
Սուզի մէջ եմ ես ամեն օր:

Իմ աքաղաղ շուտով մեւաւ,
օր ու կեանքս իր հետ տարաւ,
Իմ ձագուկներս ուրուր կերաւ,
Այդ սկ փորձանք գլխիս բերաւ:

Առ քեզ բողոք վեհ քաջ բազէ,
Ոչ զօրք ունիմ և ոչ էլ զէն,
Մի դատ բանամ ուրուրի դէմ,
Զագերս կերաւ անդութօրէն:
Դարձիր քո բուն մարի սիրուն,
Երդում կանեմ իմ ճանկերուն,
Դատ պիտ տեսնեմ ես քու սիրուն,

Աքասր կանեմ ուրուրներուն:

Ա՛խ դու բազէ զլիսուդ մատաղ,
Դատաւոր ես իսկ քաջ ճարտար,
Ցաւում եմ ես միշտ անդատար,
Իմ վշտերիս արա մի ճար:

Այրի ես դուն սիրուն մարի,
Բնութեամբ հեղ ես և խիստ բարի,
Եկ դու իմ քով կեր միշտ գարի,
Ինձ հետ ապրիր երկար տարի:

Եսթող չապրեմ, լաւ է մեռնեմ,
Քան թէ քեզի գերի լինեմ,
Լաւ է ինձի այրի մնալ
Քան թէ վատիդ գերի դառնալ:

ի 20 Յունիսի 1909 թիւ
Կ. Պօլիս

Քայատրութիւն բանաստեղծութեա-
նս մարին հայ ազգ կը նշանակէ, ու-
րուր մեղ տանջող ազգ, իսկ բազէն
եւրոպացին է:

ԵՐԿՈՒ ՔՈՅԹԵՐ

ՄԵԾՆ էր պահում սիրականներ,
Փոքրիկ չունէր այդպէս բաներ,
ՄԵԾԻ անուն Եղու տիկին,
Փոքրի անուն խանում Անգին:
Կաղ գեւն եկաւ փոքրին դոնախ,

Խրատեց նրան ապրել անկախ,
Խանում Անգին գործել նոր մաղ,
Կերաւ խմաւ գարձաւ խիստ չաղ:

Դոնախ կանչեց տանուտէրին,
Ճաշ պատրաստեց խորուած մարին,
Իր մարդ ջաղցում կազար գարին,
Ավել բարձաւ եղ նուպարին:

Շուտով հասաւ իր տան դուռին,
Մէջքն էր կոտրում նուպար եզին,
Դուռն էր փակած խանում Անգին,
Ինչպէս պահեր տանուտէրին:

Սիմօն ասաց գուռ բաց այ կին,
Կոնակ կոտրաւ խեղճ եզնուկին,
Սաստիկ կլար խանում Անգին,
Վերջ չէր տալիս իւր աղմուկին:

Սիմօն գնաց կանչել գքենին,
Որ գար վերջ տար քրոջ լացին,
Եղոօն գործեր իւր տան խալին,
Խոկոյն խարեց Սիմօն բալին:

Այ փեսա ջան նոտիր գու տան,
Մի քիչ խմէ էս մեր պաղ թան,
Ամանէ կոտրած էն կոտրած ծամ,
Եղոօն գնաց Սիմօնի տան:

Տեսաւ Անգին գործում էր խամ,
Զէխեց քրոջ նա կորեց զձայն,

Կոտրեց զցնցոց լեցուն էր թահ,
Թափեց զթան, հետն էր նոր ման:

Տանուտէրին շուտ դուրս արեց,
Քրոջ գործեր պատսպարեց,
Պատռած շորեր իսկոյն կարեց, բայց
Նուպար եղին էլ ազատեց:

Եղօն գարձաւ ինքն իրեն տան,
Պատմեց վեսին չնչին էր բան,
Միմօն կերաւ եղձուն ու թան,
Խիստ տգէտ էր, յիմար անբան:

ի 1 գեկտեմբերի 1810 թիւ
ի Դ սվեճ

ՅԱՅՑՆՈՒԹԻՒՆ ՈՐԴԻՈՅ ՄԱՐԴՈՅՆ

Ով գերագոյն գուն ես էակ,
Ծնար ի մէնջ առանց դայեակ,
Դարեր անցան քեզի մոռցան,
Յոյս, սէր, իմէնջ իսկ վերացան:

Ոչ իսկ մարդ ենք, ոչ էլ արձան,
Երկրագործ ենք չունինք վարցան,
Լաւ ճամբայէն շուտ յետ գարձանք,
Մեզ փրկողին իսկ ուրացանք,
Էնտուր համար էլ կուրացանք:

ի 10 մայիսի 1909 թիւ
կ. Պոլիս

ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ ԹՇՆԱՄԵԱՅ

Երբ մեր թշնամին իւր ծուռ բազկաւ,
Սուրն ի ձեռին է առած,
Հայոց անմեղ մանկանց խոխողելով,
Պիղծ բերանով մեր սուրբ արիւն է
արբած:

Ոչ Վան մնաց, ոչ Բաղէշ,
Ոչ Սասուն մնաց ոչ էլ Մուշ,
Զյագեցաւ չարաճին պիղծ ապուշ,
Տգէտ հայեր գործում են միշտ անզգոյշ:

Ահա համը և խուլ Եւրոպ,
Զլեցիր մեր լացի գոյժ,
Իժիշկ ես դու կամ վիրաբոյժ,
Խաբեցիր մեզ խիստ աշխոյժ:

Ինչպէս ստորոտ գողգոթայի,
Գորովագութ մարք լալիս էին,
Զանմեղ խաչեալն վեհ Յիսուս,
Սըմին նըմա պիտի ողբայ,
Աշխարհ տիրող սէդ հիւսիս:

ի 10 Յունիսի 1909 թիւ
կ. Պոլիս

ՏԷՐ ՕՀԱՆԵԱՆՑ

Դավրէժում կան Տէր Օհանեան,
Զորս եղբայր են տիպար նման,
Մէծն Մահաեսի ինքն Ալէքսան,

Միւսն աղա է Ասատուր խան:

Ողորմած է պարոն Ստեփան,
Փոքր Աւետիս պարկեշտ է այն,
Պերճախօս է պարոն Վարդան,
Հագուագիւտ է այդ գերդաստան:

Սոցա հայրն էր Տէր Յարութիւն,
Մարմնով տկար հոգով արթուն,
Աշխատանքն էր աղքատներուն,
Անփող կդառնար գէպի իւր տուն:

Մեծ գերդաստան խիստ բան ՚ի բուն,
Սաղմոս երգու տէր Յարութիւն
Մէկ միւսից նման են նոյն,
Օրհնեալ լինին սոքա անհուն.

յ 3 դեկտեմբերի 1910 թիւ
Դավթէծ

Տէր Յարութիւն ունի մի դուսար
որու անուն է Սօղամէլ, նա էլ նման
է իսկ իւր հէր:

Վերոյիշեալ տէր Օհանեաններ
չորս եղբայրներ են, առաջին և մեծ
եղբայրն է Մահաեսի Ալէքսան, երկ-
րորդ Աստուածատուր աղան, որ այժմ
Ռաշտ քաղաքում կապրի իր ընտան-
եօք, իսկ պարոն Ստեփան և Ա-
ւետիս Բագու կապրեն իրենց ընտան-
եօք, իսկ պարոն Վարդան մահուսի

Ալէքսանի մեծ որդին է և ունի մի
եղբայր ևս Հրանդ անունով և մի հա-
մեստ քոյրիկ որու անունն է Սըբրուհի
Դավթէծ քաղաքի բոլոր հայ բնակիչ-
ներ գիտեն որ սոքա մարդասէր են և
նողաստող են եկե զեցւոյ և ազգին:

ՀԱԼԱԾՈՒԱԾ ԽԵՆԹ ՄՇԵՑԻՆ

Ի՞նչ եմ արել ևս այս մարդկանց,
Հալածում են զիս միշտ, յանկարծ,
Մեռեալ անձինք համատարած,
Զար կը գործեն իսկ նախընթաց:

Յուսով եմ ես, ոչ թէ՝ կորած,
Վէմ հաւատոյ մէջքս պնդած:
Միշտ հալածուած խիստ ընկճուած,
Արդարութիւն կոթով տնկած:

Չորիցս անդամ բաժին եղած,
Իշխանութիւն հոգով կորած,
Բարոյապէս նոքա ընկած,
Կարգ ու կանոն են խանդարած:

ի 10 Նոյեմբերի 1909 թիւ
Դավթէծ բաղաբում գրեցի

Չորս անդամ հալածեցին խենթ
մշեցին Դավթէծ քաղաքից առ նա-
խանձու խեղճին ծուղակ էին զցում,
Դավթէծ քաղաքի բարեսիրտ քահա-

Նայք։ Առաջին անգամ հալածող եղաւ
Պարզեանց Սուքիաս Սրբելիսկոպոսի
ձեռամբ, երկրորդ հալածում, Այվագ-
եան Սահակ եպիսկոպոսի ձեռամբ և
երրորդ անգամ ևս Այվագեանի ձե-
ռամբ և չորրորդ անգամ Մագսութեան
վարդապետի ձեռամբ, որն որ իր ար-
ժանի վարձատրութեան փոխարէն ե-
րեք ապտակի հարուած ըստացաւ տէր-
Աւետիսեան Ղեռնդ քահանայի ձե-
ռքէն։ Այս պատճառաւ է որ այս ե-
րեք տուն բանաստեղծութիւն գրեցի։

ԲԱՐԻՔ ԱՇԽԱԲՃԻ

Աշխարք լի են իսկ յոյժ բարիք.
Ոմանք վայելում են,
Ոմանք էլ պէտք ունին ու կարիք,
Ոմանք էլ բարեաց փոխարէն գործում
են չարիք։
Թող կեցցէ երիտասարդն այն քաջ
Անդրանիկ,
Որ յանուն ազգութեան վօթեց արիւն
ու քրտինք։
Թող մեռնի դժոխքի չար Համիդ
Սուլթան,
Որ պատճառ եղաւ կորստեան անմեղ
մարդկանց։

Երկաթեայ վանդակ լինի նրան զնդան
Անքալտելի մնայ միշտ և յաւիտեան։
ի 29 Մայիսի 1909 թիւ
Կ. Պօլիս

Այս բանաստեղծութեան գրելուն
երեք օր յետոյ Սուլթան համիդ զըր-
կուեցաւ իր թաղթէն։

Նուէր առ պարոն բժիշկ Պօղոս
Քիչիւթեան

Ծնունդ նորա է իւսկիւդար,
Բարեաց գործոց է անդատար,
Իսկ այժմ ապրում է քաղքեղոն
Որ տեղ հիւանդ ալքատ լինի,
Սլանում է իսկ անդ և հոն։

Ունի նաև մի ազնիւ կին,
Փոքրիկ զաւակ յոյժ թանկագին,
Բնութեամբ նաև իսկ և արի,
Լուրջ գործում է միշտ և բարի։

Զայն հալածող մուխը մարի,
Տանջին զիսեղճին երկար տարի,
Զար նախանձի տունը քանդուի
Տեղն էլ ցանւի որոմ գարի։
Արհեստի մէջ է նա հերոս,
Զայն հալածող մարդ չէ, այլ խող,
Չէ հարազատ պոռնիկ կամ բող,

ԽԵՂՃԻ աջքին փշեցին թող:

Բարեկամ իմ ազնիւ դօքտոր,

Մի վհատիր այդքան շուտով,

Պաշտելին մեր չի թոյլ տայ քեզ,

Որ դու լինիս միշտ ամօթով:

ի 3 մարտի 1909 թիւ

Կ. Պոլիս

Դօքտոր պարոն Պօղոս Քիւչիւք-
եան ծնուել է Պօղոսյ իւսկիւդար թա-
ղում, ապրում է այժմ ընտանիքով
Գտափի գիւղում: Յանկարծակի ական-
ջիս լսողութիւն դատրեցաւ, իսկոյն
գնացի պարոն դօքտորին, ճիշտ
երկու ժամ աշխատեցաւ և իմ
ականջիս լսողութիւնը բացաւ: Այնպէս
առիթ բերաւ նա իր գլխին գալիքներ
բացատրեց ինձ, թէ ինչպէս չարիքներ
գործեր էին միւս բժիշկներ այդ հա-
մեստ անձնաւորութեան դէմ և ինքն
փոխանակ վրէժինդիր լինելու այլ հա-
կառակ լաւութիւն է անում նրանց:
Արժան համարեցի յիշատակել իմ բա-
նաստեղծութեան էջում:

Բանասեղծ Զեւնդ բահանայ

Երկու սղա մէկի անուն բարի Մար-
կոս, միւսինը խորք Կիրակոս:

Երկու տղայք վէճի բռնուան,

Երկար բարակ կոփիւ արան,

Մէկ միւսի դիւշման դառան,

Մէկ մէկէլից պարգև առան:

Մէկի անուն բարի Մարկոս,

Իսկ միւսին խորթ Կիրակոս,

Նոցա գրգող կաղ գև Բակոս,

Գանգատ հասաւ առ Պիղատոս:

Կոչեց նոցա և նոյն հետան, (իսկոյն)

Երկուս մէկ տեղ գցեց զնդան,

Մէկ միւսին այստեղ փետտան,

Կանչեց նրանց դիւանատան:

Տօ անպիտան բարի Մարկոս,

Գոռաց այնաեղ խորթ Կիրակոս,

Այ գարշելի դու վատ տղայ,

Առառն բիճ ես, իրկուն աղայ:

Մայրդ գնաց պոռնկատան,

Որ մայրս տեսաւ նրան էն աան,

Քեզի զուրբան կիրակոս ջան,

Մի գովիր մօրդ դուն էլ այդքան:

Շատ բարի է մայրդ էդքան,

Ինչու գնաց պոռնկատան,

Որ մայրս տեսաւ էն սրբազան,

Շատ կպարծիս դու պաշտիկ խան,
Առ քեզ մի լաւ իսկ պատասխան:

ի 26 դեկտեմբերի 1909 թիւ
Դաւթէ

Հետևանք բանաստեղծութեանս, բարի Մարկոս և խորթ Կիրակոս կը ուժում են: մէկ միւսի մօր պակասութիւնն է ցուցնում, խորթ Կիրակոս ասում է բարի Մարկոսին թէ իմ մայրս քու մօրդ պոռնկատան է տեսել, իսկ Մարկոսը պատասխանում է նրան ասելով եթէ քու մայրը լաւ կին էր, ինչ գործ ունէր պոռնկատան, որ իմ մօրս այնտեղ տեսաւ ուրեմն նշանակում է թէ երկու կինն էլ միւնոյն գործի տէրն էին:

Առակս կըցուցնէ թէ Ազնիւ մարդ զինքը թոյլ չի տալիս, որ ուրիշի պակասութիւնն մէկուն մը ցոյց տայ: Սորա համար է ասում ոուրբ զիրքը ինչ չափով որ չափիս, նովին չափով չափեցի քեզ: կրկին մի ուրիշ տեղում ևս ոուրբ Նւետարան ասում է, կեղծաւոր առաջ քու աչքիդ մէջէն գերան հանէ և յետոյ ուրիշի աչքի շիւզը ցոյց տուր: Ուրեմն նախ պէտք մենք մեր պակասութիւններն ուղղենք և յետոյ ուրիշներին նկատի առնենք:

ԱՅՐ ՈՄՆ ԱԹԵՆԱՑԻ

Այր ոմն տեսայ Աթենացի,
Ազգով Յոյն էր շատ խելացի,
Նկարիչ էր անցող գարձի:
Մեծ էշի տեղ մարդ էր բարձի:

Երբ ես տեսայ խիստ զարմացայ,
Այս ինչ բան է դու ինձ ասայ,
Գլխարկ ունէր էն էլ ֆէս է,
Ի տեղոյ իշտոյ մարդ կդասէ:

Ինձ պատասխան տուաւ զայս բան,
Մի զարմանար աղբէր աման,
Մարդէն էլ էշ կայ սաստիկ անբան,
Է՞ր զարմացար դու Օհնիկ ջան:

ի 6 օգոստոսի 1909 թիւ

Հետևանք բանիս շատ անգամ մարդիկ ուրիշի հագուստներին ու գլխարկին կամ թաշախուստին նայելով ազնիւ կհամարին բայց զարմանք չէ, իրենք էլ կատարեալ կրթութիւն չունենալու համար, այդպէս կըգնահատեն կրնայ ըլլալ քանի մի հարուստ մարդկային իսկ բնութիւն իշտոյ: Սակայն ուկէտների աչքին ազնիւ է համարւում վասն զի փող ունի:

ԴՐՈՒՅԳ ԱՌ ՊԱՐՈՆ ԶԻԲՐԱՅԻԼ ԲՈՒԴԱՎԱԼԵԱՆ

Բուդաղեան վեհ Զիբրայէլ,
Վաճառական ես անվեհեր,
Բարեացակամ ես մարդասէր,
Օրնեալ լինի քո հէրն ու մէր:

Ազգին օգնող ես անձնուէր,
Աշխատաւոր և ջանասէր,
Արի գործող մեծ տանուտէր,
Լաւին յարդող ոչ փառասէր:

Տիպարդ սիրուն հասակդ երկար,
Պապակած եմ իրեւ հազար,
Ծարաւս անցուը ունիս դու կար,
Գեղեցկատես մարմանդի գու:

Հնծայս քեզի սիրով վեր առ,
Քրքուկո փոքրիկ շատ քիչ է տառ,
Եռանդ ունիս երբէք չէ սառ,
Բաղցրախօս ես բառ առ և բառ:

Կառ ճրագ ես Զարէվանդի,
Ինձ բերիր դու մեծ եռանդի,
Մերժում ես միշտ վատ կախարդի,
Յոյժ կը յարդիս անկեղծ մարդի:

Հասակ ունիս նման բարդի,
Իսկ վեհանձն ես ոչ տմարդի,
Ճիշտ ես ասում և հաւասարի,

Պերճ պարծանք ես Զարկանդի:

Պարզ ես խօսում ազատորդի,
Մանկունք ունիս նման վարդի,
Զես նախանձի այլոց զարդի,
Քաջ առաջնորդ ես Սալմասարի:

ի 10 յունվարի 1910 թի
Դավթէծ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԱԻԵՏԱՐԱՆ

Իմ սիրասուն Աւետարան,
Ազգեր միմեանց ձեռքէն առան,
Իբր մարդարիտ սրտեր շարան.
Ուկու նման զլիներ շարան:

Շատ մը գայլեր գառեր դառան,
Ոմանք նրանցից մուրագ առան,
Սուրբ հոգեշտունչ հացի մառան,
Մատնիչ Յուրգայք յետ չդառան:

Մէր ունի տէր իբր վառարան,
Վայ նրանց որ սրտեր սառան,
Ուրացողներ գաղան դառան,
Էնդուր նրանք մուրագ չառան:

Երրորդութիւն Աստուած էն ուարդ,
Ուրացեալներ կընկնին թակարդ,
Անհաւատներ կապրին զի արդ,
Այժմեան ծնունդք են իսկ կախարդ:
Եղեմական էն սուրբ դրախտ,

Անկեղծ մարդիկ կեան իսկ անխախտ,
կենդանի մարդ յաջողակ բաղդ,
Պիտ վայելէ էն սուրբ դրախտ:
ի 11 դեկտեմբեր 1910 թիւ

ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ

Ժամանակին մի չար տղայ,
իւր հօր անուն կիկոյ աղայ,
իսկ իր անուն Մկոյ սաղայ,
Միշտ վատ տղան զումար խաղայ:
Կիկոն խրատեց Մկոն ի տան,
չէր լսում նա երբէք մի բան,
չէրն ինքն ասաց որդի եաման,
եր չես լսեր խրատս այդքան:

Մկոն արաւ միշտ զողութիւն,
կամաց կամաց քանդեց հօր տուն,
Անսաստ էր նա իբրև զում,
Ամբողջ գիշեր չունէր նա քուն:

Մի օր կիկոն շատ մաածեց,
Խելքով մտքէն բան հնարեց,
Բռնեց զտղան տան սան կապեց.
Մի հաստ վայտով մէջքին թակեց:

Ոտք ու գլուխ կիկոն ջարդեց,
Բնաւ տղուն ոչինչ չազդեց,
Կիկո զրան կար մի գերան,
Հաստ ու երկար իբրև պարան:

Տղան գործեց շատ չարութիւն,
Հաշիւ պահեց հէրն ինք արթուն,
Կոչեց զտղան զրսէն ի տուն,
Քարոզ տուաւ գիշերն ըիթուն:

Տղան մէկ-մէկ յանցանք արեց,
Հայր գամ առաւ գերնին գամեց,
Շատ չարիքներ Մկոն արեց,
Հայր գամերով զգերան պատեց:

Մի օր Մկոն զգաց զայս բան,
Ինքն էլ զղաց իւր կերած թան,
Չար չգործեց յամենայն ժամ:
Նա հասկացաւ որ ինքն էր խամ,

Կիկոն զգաց Մկոյի արած,
Միեր քաշեց ուրախ ու պանձ,
Մկոն գործեց բարի նախանձ,
Լաւ պահեց նա զինք և իւր անձ:

Մի օր որդւոյն տուաւ ընծայն,
Ասաց նրան գամեր պըծան,
Դու ես իշխան էլի իմ տան:
Քեզի զուրբան կանեմ զի՞մ ջան:

Մկոն լացաւ և նոյն հետան,
Կարծես ընկել էր նա զնդան,
Կիկոն նկատեց ինքն էլ զայս բան,
Ասաց տղուն իմ հոգի ջան:

Ինչի կուլաս զուն էլ էղքան,

Գամեր պղծան եկ գնա տան,
Տղան ասաց գամեր պղծան,
Բայց ինչ օգուտ որ ծակեր կան:

ի 29 դեկտեմբերի 1909 թիւ
Դավիթ

ԿՈՅՐ ՇԱՄԱԽԵՑԻՆ

Հեղինակ

Ժամանակին մի մարդ իւր կին,
Քաղաք գնացին ի միասին,
Մարդն հեծաւ զիւր աւանակ.
Զկին առաւ իսկ իւր քամակ:

Շատ գնացին, քիչ գնացին,
Քաղաքին իսկ մօտիկացին,
Այնտեղ տեսան մի աչազուրկ,
Մուրացիկ էր մաքով էլ կոյր:

Մարդն էր գլխոս, տարիքն էլ հին,
Հեծցուց զկոյր յաւանակին,
Դժգոն էր կին մարդու բանին,
Ինչ պիտ անէր տկար էր կին:

Քաղաք հասան երեք միասին,
Վար պիտ իջնէր այն կոյր մուխսին,
Զհամոզուեց ինչ որ ասին,
Զարմանք մնացին այր և տիկին:

Իսկ բան հասաւ դատաւորին,

Կոչել տուաւ զերեք միասին,
Ատեն ճրագի դատ սկսին,
Սուտ էր խօսում էն քօռ մուխսին:

Հրաման այս էր դատաւորին,
Զոկ-ջոկ պահել զայր և զկին,
Նոյնպէս զղում էր քեօռ մուխսին,
Պահապան լսեց ինչ որ ասին.

Այր

Այս չոփ ես իմ կնոջ,
Խրատեց զիս մի ժամ ամբողջ,
Ընկայ բանտում քաղցած ու խոնջ,
Չեռքես հանի ես իմ կնոջ:

Կին

Յառաջ ասի ես իմ մարդուն,
Մի տալ զէշ մեր էդ քեօռ քրդուն,
Շնորհիւ կուրին ընկանք բանտում,
Ես ինչ ասեմ ախմախ մարդուն:

Կոյրը

Էշ կստանամ կամ թէ զկին,
Զերկուս միասին կամ թէ զմին.
Աչազուրկ եմ ինձ պէտք է կին,
Նա աչք ունի կճարէ մին:

Դատաւոր

Առաւօտեամ լուսաբացին,
Կոչեց դատի զերիս միասին,

Նախ ազատեց գայր և պկին,
Մի լաւ պատժեց խարդախ մուխսին;
Խիստ թռվիչ էր շամախեցին,
Իշուն տիրեց հեան էլ զկին,
Մի տուն շինեց էն էլ անհիմ,
Աչքով քեօս էր բնութեամբ էր ջին:
ի 23 դեկտեմբերի 1910 թիւ
Դաւթէծ

ԱՆԶԵՆ ՀԱՅ

Չունինք հրացան և ոչ գանակ,
Արդեօք կը գայ մի ժամանսկ,
Հայն էլ կազմէ զինք իւր բանակ,
Զօրք ունենայ իսկ անքանակ:

Երբ ունենայ սէր միութիւն,
Կրտանա նա ազատութիւն,
Զատուան միմիանց դարձան դրդում:
Էն պատճառով մնացին անտուն:

ի 29 դեկտեմբերի 1910 թիւ
Դաւթէծ

ՆՈՐ ՏԱՐԻ

Իմ սիրելի դու ամանոր,
Գալդ մեղի է հարկաւոր,
Անցեալ է անց տկար անզօր,
Սիրեկան աւուրս է համազօր:

Եկաւ քեզ հետ քիչ ճերմակ ձիւն,
Պարզի բնութեան միշտ է անհուն,
Փարթամ հարուստ զարդարած տուն
Քաղցած աղքատ չունի նա քուն:

Շատ տարիներ եկան քեզ պէս,
Կաղ մնացինք դարձեալ այնպէս,
Կոյր սերունդով եկանք հանդէս,
Մերն է կասենք այս նոր կրկէս:

ի 1 յունուարի 1911 թիւ
Դաւթէծ

ՀՈԴԵԲԱԺԻՆ

ՀԵՂԻՆԱԿ

Տեսած ունին թաղէշ քաղաք,
Արք տեղւոյն են ժլատ աղաք,
Մէկուն տեսայ անուն Մերժան,
Զարագործ էր ինքն անարժան:

Շուտով եղաւ մահմեզական,
Բաժին դառաւ արքայութեան,
Ժառանգ թողեց երկու տղան,
Մեծի անուն էր Մերուժան:

Փոքրի անուն Շահնաղիրխան,
Հօրից մնացած կար երկու բան,
Մին մանգաղ էր միւսն էլ գութան,
Տան պահապան ու շուն Յուղան:

Շուտով դոքա բաժանուեցան,
Հօր ժառանգին արժանացան,
Մանգաղ գութանին տիրացան,
Աղքատ կեանքէն ազատուեցան:
Փոքրին ընկաւ բաժին մանգաղ,
Մեծին ընկաւ գութան անկախ,
Սև բալաք շուն մարմնով խիստ չաղ,
Կծոտող էր ոտով էր կաղ:

Բաժին տանք զայն մեր որբ. վանքին
Որ միշտ խաչայ մեր խօր խօգին,
Փայ, մաս, լինի հոգւոյ բաժին,
Արժան է նա Մերիժանին:

ի 1 յունվարի 1911 թի
Դաւթէծ

ՆՈՒԵՐ ԱՌ ՆԱԶԱՐԵԿԵԱՆ
Աղա Զաքար Նազարբէկեան,
Պարկեշտ բնութեամբ ինք պատւարժան.
Գործող է նա մեղմ անագան,
Լսում է նա որբոց կական:

Մարտիրոսն է եղբայր նորին,
Դուշմանք նոցա անվերջ կորին,
Սիրով նոքա միմիանց փարին,
Համբերութեամբ գործեր տարին:

Արդ ապրում է նա Թաւրիզում
Արթուն բնութեամբ իսկ բանիբուն,

Բարեգործ է շատ և անհուն,
Հեռատես է օրհնուի իւր պուն:

Փոքրիկ եղբայր անուն Վահան,
Կաշխատի նա ոչ թէ ունայն,
Մեծ քոյր նոցա Հովհաննեայ,
Խանում է նա միշտ և յիմա:

Նորերս դնաց նա քիւրդիստան,
Մեղմ է խօսում քաղցր է իւր բան,
Վճռ կտայ արմատահան,
Բարեացակամ խիստ զանագան:

Կնծայեմ քեզ զայս վոքրիկ նուեր,
Դրում եմ ես միշտ անվեհեր,
Օգնական իմ դուն ես իմ տէր,
Օրհնեալ լինի քո հէր ու մէր:

Ահա քեզի սիրոյ նշան,
Ղեռդ եմ ես ոչ Ալիշան,
Ազգանունս տէր Աւետիս,
Քեզ սիրում եմ անկեղծ որդիս:

Օգնեցէք, ո՞հ բանաստեղծիս,
Նպաստ լինի նոր տաղանդիս,
Իսկ որ կամիս զիս էլ յարգիս,
Էս իմ գրքուկս տպագրիս:

ի 23 դեկտեմբերի 1910 թի
Դավթէծ

Ի՞նչ է ՀԱՅՈՒ ՄԵՂՔ

Աստուած ինքն է միշտ ահեղ,

Մարդկանց բնութիւն է տգեղ,

Հայոց բաժին է ընկել,

Որ թափառեն գեղից գեղ:

Ինչ է նրա գործած մեղ,

Ոչ սուր ունի ոչ աղեղ,

Հալածում են ամեն տեղ,

Խիստ մնացինք ազգով նեղ:

Ազատեա զմեղ և այս հեղ,

Ոչ քաղաք մնաց և ոչ գեղ,

Խոխողեցին շատ անմեղ,

Չունինք բժիշկ և ոչ գեղ:

Ով գու ինքդ Սափաւոտ,

Չունիմ թեր որ գամ մօտդ,

Եր չես լսիր հայի բօթ,

Հարազատ եմք ոչ թէ խորթ:

Պղծեցին մեր օրիորդ,

Մեզ մորթեցին իբր հորդ,

Միթէ սոքա չեն իսկ օղորդ,

Կատղի քիւրտը թափի մորթ:

ի 20 մայիսի 1909 թի

Կ. Պոլիս գատի գիւղ

ՄԱՅՐ ԽՐԱՏՈՒՄ է իհր ՈՐԴՈՒՆ

Մայր

Դուն իմ տղաս խելացի կաց,

Բարեաց գործոց լեր աչքաբաց,

Մօլութիւնը համատարած,

Հեռու կաց գու իբաց, իբաց:

Տղան

Բաւական է ինձ խրատիս:

Երկար չապրիս շուտով մեռնիս,

Զիս կանիծես մուրազ չառնիս,

Ի գեհենում գուն իսկ այրիս:

Մայր

Ազնիւ տղան մօր կը լսէ,

Իր ծնողաց չի բամբասէ,

Քրտնիքի տեղ արիւն կհոսէ,

Մօր խրատին իսկ կը լսէ:

Տղան

Էլ մայր կա չէ, քեզի նման,

Իսկ շուտ կորչիս գու անգուման,

Զը ծնուիր գու վատ ես, եաման,

Յաւիս բնաւ, չարիր դարման:

Մայր

Ա՛ի իմ տղաս այսպէս չէ կարդ,

Չար ես գործում շատ խիստ անարդ,

Իմ ցաւ շատ է կորած ես արդ,

Յետոյ կրզաս մայրիկիդ յարդ:

Տղան

Շատ ես խօսում աւելորդ է,
Թքնեմ երեսդ խորդ ու բորդ է,
Քո հայր ու մայր էշ և հորդ է,
Վհուկ ես դու իսկ օղորդ է։

Մայր

Կափսոսամ քեզ ախ իմ որդի,
Հնկեր ունիս չարահոգի,
Հսածս թանդ է մեղը ու կողի,
Պարկեշտ կենաս կըլլաս յարգի։

Մայր

Տղաս գնաց հեռու երկիր,
Այս Աստուած իմ նրան փրկիր,
Կասկած ունիմ որ զիս զրկիր,
Մեռաւ տղաս ինձ չյարգիր։

Հեղինակ

Անսաստ տղան մօր չլսեց,
Օտար երկիր քրտինք հոսեց,
Պարկեշտ հարանց զինք յետ կասեց,
Իր մայրիկին միշտ վատ ասեց։

Գնաց թիֆլիս պարահանդէս,
Միշտ ժուռ կըդար նոյն չար կրկէս,
Պունիկ կանանց կանէր իտես,
Ախտաւորւեց ֆուանգի պէս։

Հիւանդ եղաւ երկար տարի,
Մօրը չըլսող մուխը կըմարի,

Զի գործ չունէր երբէք բարի,
Գլուխ զարկաւ, նա չոր քարի։

Այդպէս կըլլայ անսաստ որդին,
Նեխի մարմին թափի մորթին,
Իւղը վոթեց մնաց թորթին.
Չայն կերկերուեց իւր կոկորդին։

ի 10 գեկտեմբերի 1909 թիւ
Դավթէծ

ՕՐՀԱՍ ՄԱՀՈՒԱՆ

Հրեշտակս եկաւ լուսին եր մօտ,
Բուրմունք ունի անուշահոտ,
Բնութիւն նորա բարի ու զուտ,
Կեանիքս նրան իսկի չէր փութ։

Մարդիկ ոմանք են զարդարւած,
Դագաղ մահուան համատարած,
Փառք աշխարհի իսկ սնապանծ,
Թէկուզ մի ոմն կողով տնկած։

Մեռեալ անձինք չեն անդրադարձ,
Վարքդ ուղղիր հեգ մոլորւած,
Հաւատարիմ չես դու նախնեաց,
Դիրուկ մարմնով հոգով կորած։

յ 2 փետրվարի 1911 թիւ
Դաւթէծ

**ՆՈՒԵՐ ՊՈԼՍԵՅԻ ՍԱՌԱՀԵՄՆ
ԸՆՏԱՆԵԱՑ**

Իմ որդին ես վեհ Վիրքինէ,
Ազնիւ ծնունդ ինք անդին է,
Ազգանուն քո է Սառաճեան,
Ամուսին քո Խոչիկ մեծ խան։

Որդիք ունիս իսկ զանազան,
Անուանք նոցա են հայկազեան,
Մեծի անուն համեստ Օննիկ,
Երկու փոքրիկ Ներսէս Աննիկ։ (Աննա)

Իմ որդի գու Պէտթըիս,
Հլու բնութեամբ աննման իս,
Վերթին ու փոքր Յուլիանէ,
Մէկ միւսից աննմանէ։

Շատ սիրուն են Գիշակ Աօֆիկ,
Պարկեշտ բնութեամբ մեծ ընտանիք,
Բարձր պարգևի դուք արժանիք,
Բարեաց դործոց միշտ պաշտպանիք
ի 10 նոյեմբերի 1909 թի
Դավթէծ

**ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ
ԱՌ ՀԱՐԿԱՀԱԼՔԻՉ**

Աշխարհական խեղճ ժողովուրդ,
Բանի մեջնից կուզեն մեծ տուրք,

Մարի ձեր մուխ քանդուի վատ ուրդ,
Գինին խմիք մնաց սև դուրք։

Ոչխար տարին չունինք էլ բուրդ,
Մեզ թալնեցին Զերքեզ և Քիւրդ,
Ոչ կոշտ դառան և ոչ յազուրդ։
Խիստ գազան են չունին մի գութ։

ի 6 օգոստոսի 1911 թի
Դավթէծ

ՍԱՏԱՆԱՑ ԵՒ ՀՐԵՎՏԱԿ

Գիշեր սատանայ է իսկ ցորեկ նրեւսակ

— Գիշեր եմ ես խիստ ահուելի,
Շատ չարիքներ, ի մէջս լինի։
— Ցորեկն եմ ես, միշտ գովելի,
Ամեն մարդի, եմ սիրելի։
— Գողի համար, ես եմ օգնող,
Անառակներ, կապրին փառքով։
— Ցորեկն եմ ես, խիստ ցանկալի,
Զարագործներ են ողբալի։
— Սիրել պարել, ի մէջ լինի,
Պոնիկ կանայք, են արքունի։
— Ցորեկն եմ ես, ցորեն ցանող,
Զար մարդկանցից, վրէժ հանող։
— Գիշերն եմ ես, յոյժ մթանի
Զար գործողին, եմ պիտանի։

Արև ունիմ, Ճառագայթի.
Խիստ չարիքներ, միշտ փարասի,
Գիշերն եմ ես, չարեաց ծածկող,
Պունիկ՝ մարդկանց, ես եմ յարգող:
Յորեկն եմ ես, արմատ բարի,
Թող չբուսնի, որոմ գարի,
Խնջոյք հարսնիք, ի մէջ լինի,
Պարահանդէս, խիստ գեղանի:

Հեղինակ

Գիշերն նման սատանայի,
Խաբել մարդկանց, Կորուստ տանի
Յորեկ հանգոյն, հրեշտակի,
Փրկել մարդկանց, Երկինք տանի:

Սիրելի դու, քաջ ընթերցող,
Վարդից վշից, որն ես հնձող,
ի 5 դեկտեմբերի 1909 թիւ
Դավթէժ

ՍՊԱՀԱՆՑԻ ՊԱՐՍԿՈՒՀԻ ՏԻԿԻՆ Հեղինակ

Մի տիկին կար ազգաւ պարսիկ,
Խիստ գովեցին ըսպահանցիք.
Ամուսնացաւ արաւ հարսնիք,
Մարդու անուն հաճի Դասմիկ:

Մի օր գողցաւ զայն պարսիկ խան,
Տարաւ Զէյնար պահեց իւր տան,
Դեռ հարս էր նա մի ամսական,
Տիկին գողցող իսմայիլ խան:

Հաճին զիմեց մեծ գատարան,
Դատաւորն էր Զիլի Սուլթան,
Նորին պատմեց իւր կնոջ բան,
Մի ճար արա քեզի զուրբան:

Դատաւոր

Հրամայեց մեծ շահզադան,
Խրատ տուաւ մարդուն էս բան,
Հաճուն ասաց էյ բարեկամ,
Ըզգեստ ունի կինդ ձեր տան:

Հանին

Այն ասաց, շահզատա խան:
Մի մնտուկ կայ կնոջս մեր տան,
Մէջ լեցուն է ամենայն բան,
Արդ կբերեմ քեզի զուրբան:

Դատաւոր

Հրամայեց Զիլի Սուլթան,
Հաճին բերաւ մնտուկ ի ատեան,
Ժողովք արաւ մեծ Շահզադան
Մնտուկ բացաւ հէնց իսկ ատեան:

Հեղինակ

Բացաւ մնտուկ Զիլի սուլթան,

Զեռքում առաւ մի կարճ ֆստան:
Հարցուց հաճուն խտես մարդկան,
Դուն ես առեր էս լաւ դարեան:

Այս ասաց գլխիդ դուրբան,
Նորէն հանեց թաւիշ ֆստան,
Կրկին ասաց էլի զայս բան
Դուն ես առեր էս նոր մօդան:

Հասմ ասաց ոչ գլխիդ դուրբան,
Ես չեմ առեր թաւիշ ֆստան,
Մութ է թւում ինձի այս բան
Արդարադառ Զիլի Սուլթան:

Սուլթան կոչեց զուստա կոստան,
Հարցուց նրան մութ ծածուկ բան,
Դուն ես կարել էս նոր մօդան,
Այս, ասաց դերձակ կոստան:

Ո՞վ տուաւ քեզ սորա դրամ:
Քէպի Ալի Խսմայիլ խան,
Խոքն և Զէյնապ եկան մեր տան,
Խոկ եմ ասում ճշմարիտ բան:

Սուլթան ասաց կաղ Ղասըմին,
Խսմայէլի տան է քո կին,
Ղրկեց զինւոր բերաւ զտիկին,
Էլի յանձնեց հաջի Ղասըմին:

ի 1 փետրարի 1911 թի
Դավթէժ

Զգաս լեր Վեհափառ Հայրապէս մեր
Ամենայն Հայոց

Հայրապէտ մեր վեհ Սուլթանեան,
Արժան գահւոյս լուսաւորչական,
Պատիւ ունիս միշտ յաւիտեան
Կեցցէ կայսր մեր Ռուս արքայն:

Հինգերորդն է վեհ Գէորգ մեր,
Տէր պահեա զայն դու անստւեր,
Հայք ձայնեցին զայն հրաւէր,
Զքուն եղբարց նա թոթափեր:

Ունիս դու միշտ հակառակորդ,
Խոկ գործք նոցա է խորդուրորդ,
Անդ ունիք գուշ անվար ու կորդ,
հարց տաս ինձի կասեմ զողորդ:

ի 15 Ապրիլի 1912 թի
Դավթէժ

ԴՐՈՒՅՔ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ ՏԱՆ

Աւետ աղան Արզումանեան,
Որդիք նորին Ազգանազեան,
Վեց տղայք ունի անզուգական,
Տիկին նորա Թամար ուհան:

Մեծ տղան է անուն Նարման,
Երկրորդ Ստեփան երրորդ Միքաման
Զորբորդ Ռուման, Փրիտօն խան,
Մայր նոցա է Թամար ուհան:

Դուստր Աւետի Սիրանոյշ սան,
Իսկ միւսն է Իշխանուհի,
Մօքոյր նորա տիկին Սալվի
Դրուագ արժան նոցա զարմի:

Հարսունք նոցա խանում Անիկ
Կին Ստեփանի անուն Մանիկ,
Սիրանուշն է փունջ ուհանիկ,
Հազւագիւտ է սոյն ընտանիք:

ի 28 Յունուարի 1913 թի
Դավիկ

ՈՒՐԱԽԱԼԻ ԿԵՆՏՐՈՆԸԿԱՌ

Մի օր գնացի կետրոնական,
Մեծ բազմութիւն աղջիկ տղան,
Նամակ բաժնող անուն Վահան,
Այստեղ կար մեր հայր սրբազն:

Դիմաց նորին Սառաճեան խան,
Վկայ բանիս Տէր Օհանեան,
Տեսուչ տեղւոյն Դաւթեան Յովնան,
Յակոբ, Բուզաղ մէկ միւսից չաղ:

Պատրաստ սեղան վրան էլ աղ
Բուֆէտ պահող ոտքէն էր կաղ,
Կար բազմութիւն ամբողջ երկթաղ,
Չալղի գուսան երգեցող սան:

Հարց մը տուաւ Խաչիկ մեծ խան,

Սաեց նորին Սրբազն ջան,
Սուրբ Կարապետ Մկրտչեան աան,
Ի՞նչ պակաս կայ արօր, գութան:

Հայր սրբազն կրթնած էր եան,
Կօնեակ ըմպեց ձուկն էր մազան,
Պարահանդէս կը տըզարզան, (վիտան)
Մատաղ սերունդ միշտ կը հազան,

Կրակ սաստիկ կեռար կաթսան,
Կար օրիորդ ձև զանազան,
Աղջիկ, տղա միմեանց բզան,
Ախ էր քաշում հայր սրբազն:

Խաչիկ խան

Խաչիկն ասաց հայր սրբազն,
Թող ջոկ կարգան աղջիկ տղան,
Այս օրէնք չէ մեր նախնական,
Կիչանաւ ազգն և ապագան:

Հայր Մրբազն

Պատասխանեց հայր սրբազն
Շփում սանուց լաւ է միմեանց,
Բարերար է ազգեցութեանց,
Նոր կրթութիւն յառաջընթաց:

Կիլաւա թաղ կետրոնական,
Հողաբարձուք վաճառական,
Մեծի անուն Կարոյ Ապեան,
Անդամ է նա եկանօմեան:

Իսկ միւսն է Տէր Յակովեան,
Քաղցրախօս է մեր Աւագեան,
Յակոբ Մեսրոբ ընկերական,
Գործում են միշտ վճռողական:

ի 5 մարտի 1913 թիւ
Դավթէծ

ԴՐՈՒԱՖ ԱՌԱԲԵԼ ԱՂԱ ԱԲՐԻԿՈՎ

Առաքել ինքն է Աբրիկով,
Ազնիւ ծնունդ հաստատ կորով,
Ապրի իսկ նա երկար օրով,
Ուր որ գնա դառնա բարով:

Այժմ կապրի երեանում,
Լուրջ գործում է նա իւր բանում:
Դէմքով ճերմակ մազեր շէկ է,
Ծնունդ ազնիւ ազգով բէկ է:

Ապրում է նա երեանում
Մի կին ունի իսկ և խանում,
Սիրասուն է նա իւր տանում,
Բարեգործ է զանազանում:

Ունի որդիք խիստ սիրասուն,
Մէկ միւսէն կայտառ արթուն,
Դէմքով զուարթ հոգով զարթուն,

Տալիս են միշտ ողորմութիւն:

ի 25 նոյեմբերի 1909 թիւ
Դավթէծ քաղաքում գրեցի զայս չորս տան
բանասեղծութիւնը:

ԴՐՈՒԱՖ ՓԱՐՈՍ ՏՊԱՐԱՆԻ

«ՓԱՐՈՍ» անուն նոր տպարան,
Լուսատու է նա հայկազեան,
Տէր նորա է վեհ Շահբազեան,
Ճառագայթ է հայոց մեր տան:

Բրդիսում ունի եղեմական,
Նման չունի անզուգական.
Զայն յարգողներ իսկ գիտական,
Հիմադիրն է Մուշեղ Աղան:

Նորա վարպեսն է Բաբաեան,
Անուն Սամսոն քաջ արական,
Տպագրիչն է Սմբատ ջիւան,
Եղբայր նորին Արտաշէս խան:

Գործաւորներ խիստ բազմազան,
Աշխատում են ելեքտրական,
Վեհանձն Մուշեղ ազգ Շահբազեան,
Խենթ մշեցուն գոքա են սան:

Թաւրիզում կայ շատ տպարան,
Նախապատիւ Փարոս արքայն.
Նա գործում է միւսներ փական,
Յաճախորդներ նրան եկան:

Ծանուցում Փարփս սպառանի


Փարոս եւրոպական բառ է, նշանակում
ծովային ջահ, կամ ճրագ, որ յատուկ
պատրաստած է ծովերու նղներ,
կամ կղզիներու վրայ, մութ գիշեր
ժամանակ նաևեր գալու ըլլան նրա
լոյսին նայելով կազմատուին վտանգ-
ներէն։ Պարոն Մուշեղ Շահըազեան
այդ մտաւոր ջահի հիմնադիրն է ու
նրա սեպհական տէրնէ, իսկ մեր
խենթ մշեցին, սոյն բանաստեղծու-
թեան անկեղծ հեղինակն է։

„Փարոս“ տպարանից բացուեցաւ ի և Յունիվարի
1912 թի Դամբէճ հայաց ի բաղն զարդի:

կ 1 մարշ 1913 թիւ

Դակրէծ խղանում գրեցի զայս:





18349

2013

